

ՍԱՐԳԻՍ ԱԲԵՂԱՅԻ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Միջին դարերում, Երուսաղեմից հետո, քրիստոնյա ժողովուրդների համար բարեպաշտական ուխտագնացությունների նշանավոր վայրեր էին համարվում Հռոմը, ուր ըստ ավանդության գործել և նահատակվել էին Պետրոս ու Պողոս առաքյալները, և Սպանիայի հյուսիս-արևմտյան ծայրամասում (Գալիսիայում) գտնվող Սանտյագո դե Կոմպոստելա քաղաքը, ուր իբրև թե սլահվում է Հակոբ առաքյալի զխատյալ մարմինը: Այդ սրբավայրերն այցելողների թվում եղել են նաև բազմաթիվ հայ ուխտագնացներ, որոնք հաղթահարելով մեծ դժվարություններ, հեռագնաց ճանապարհորդությամբ Հայաստանից հասել են մինչև Սպանիայի անծանոթ այդ ափերը, բարի հիշատակ թողնելով իրենց մասին:

XV—XVI դարերում, ասիական և եվրոպական երկրների միջև տեղի ունեցող առևտրի մեջ հայ վաճառականության դերի ընդլայնման հետ զուգընթաց բազմապիսիք վերահիշյալ երկրներում դեպքերով հայ մարդիկ. այժմ արդեն ուխտագնացությունից ավելի նրանց սկսում է հետաքրքրել իրենց այցելած երկրների քաղաքական ու տնտեսական վիճակը, ժողովուրդների վարքն ու բարքը, տեսած քաղաքների բնակչության թիվն ու զբաղմունքը, նշանավոր վանական և քաղաքացիական շինությունները և այլն: Օտար բռնակալական լծի տակ կեղեքվող հայ ժողովրդի քործիչներն սկսում են այցելել եվրոպական երկրներ նաև իրենց հայրենիքի ազատագրության համար օգնություն ստանալու սին հույսերով և քաղաքական այլ նպատակներով, հաճախ ստանձնելով դիվանագիտական հանձնարարություններ Իրանի, Վրաստանի և այլ երկրների գահակալներից:

Եվրոպական երկրներում շրջագայած առաջին նշանավոր հայը եղել է Մարտիրոս եպիսկոպոս Երզնկացին, որ 1489—1496 թթ. դեպքերի է Իտալիայում, Շվեյցարիայում, Գերմանիայում, Ֆլանդրիայում, Անգլիայում, Ֆրանսիայում և Սպանիայում, հետագայում հսկիրձ գրի առնելով իր ճամփորդական տպավորությունները:

Մարտիրոսից շուրջ մեկ դար հետո՝ 1586 թվականին, Որոտանի շրջանի Գևտաթաղ գյուղից մի երիտասարդ՝ Փիրզատա անունով, նույնպես ձեռնարկում է հեռագնաց ճամփորդության. «Իմ տանէն ելայ, ասկայկան մոլորեցի, օտար աշխարհ եկա», — գրում է նա: Թուրքիայից անցնելով

1 Դրանցից են Սիմեոն հայր (X դար), Դավիթ Հայկազնը (XII դար), Կիլիկյան Հայաստանի վերջին գահակալ Լևոն V-ը և ուրիշներ (տե՛ս «Բազմավէպ», 1937, թիվ 2—5, էջ 51—52):

2 Մարտիրոս Երզնկացու «Ուղեգրությունը» վաղուց հայտնի է հայերեն բնագրով ու եվրոպական թարգմանություններով: Martyr (Evêque), Relation d'un voyage fait en Europe et dans l'Océan Atlantique a la fin du XVe siècle, sous le règne de Charles VIII, Trad. en français par J. Saint-Martin, Paris, 1828 (Ֆրանսերեն թարգմանություն): «Մարտիրոս եպիսկոպոսի Երզնկացույ ուղեգրություն ի Սպանիա» («Բազմավէպ», 1937, № 2—5, էջ 49—60): Վ. Հակոբյան, Մարտիրոս Երզնկացու ճանապարհորդական նոթերը (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. դիտ.), 1957, № 6, էջ 97—110): Relación de un viaje por Europa, con la peregrination a Santiago de Galicia, verificado a fines siglo XV, por Martir obispo de Arzenjan (պորտուգալերեն թարգմանությունը և ներածական հոգվածը ռ. I. Gañangos de Riaño-ի):

3 Փիրզատա Ղափանեցու փորրիկ «Ուղեգրությունը» տպագրված է «Բազմավէպի» 1882 թ. համարում, էջ 317—318: Հատվածներ է հրատարակել նաև Աշոտ Հովհաննիսյանը, «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» աշխատության Բ հատորում (Երևան, 1959, էջ 76—77), քաղելով Տիրայր վարդապետի կազմած Օքսֆորդի Բողլեան գրադարանի հայերեն ձեռագրերի անտիպ ցուցակից («Ուղեգրության» բնագիրը պահպանվել է այդ գրադարանի № 122 հայերեն ձեռագրում):

Լեհաստան, Փիրզատան լինում է Գերմանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, այնուհետև այցելում է Սպանիա՝ «Մատրիլ քաղաքն... մեծ թագաւորին թախտն», և եվրոպական այլ երկրներ։

1598 թ., անշուշտ հայազգի բանագնացի միջոցով, Քարթլիի Սիմոն թագավորը (1558—1600) Թիֆլիսից հայերեն լեզվով մի գրություն է ուղարկում Սպանիայի թագավոր Փիլիպպոս II-ին՝ թուրքերի դեմ քրիստոնյա պետությունների զինական ուժերը միավորելու և միասնական պայքարի ճակատ ստեղծելու անհրաժեշտության մասին։ Նամակից պարզ է դառնում, որ առաջինը «Թուրք ու գիր սիրոյ միաբանութեան» ուղարկողն եղել է Սպանիայի թագավորը։ Չպետք է տարակուսել, որ այս բանակցությունները հայ գործիչների միջոցով են իրականացվել⁴։

Բանասիրությանը հայտնի հաջորդ հայազգի ուղեգնացը, որ իր ճանապարհորդությունների մասին հետաքրքրական տվյալներ է գրանցել ինքնակենսագրականի բնույթ ունեցող գրվածքի էրկրորդ մասում՝ Երնջակի շրջանի Ապարաններ գյուղի ունիթոր քահանա Ավգուստինոս Բաջեցին է։

XVII դարի սկզբին, մտերմանալով սպանացի մի դիվանագետի հետ, որը Շահ-Աբրահամ մոտ իր գործերն ավարտելով պատրաստվում էր եվրոպա վերադառնալ, Ավգուստինոսը դառնում է նրա ուղեկիցներից մեկը և Ռուսաստանի վրայով անցնում եվրոպա։ Լինում է Լեհաստանում, Գերմանիայում, Սպանիայում, Պորտուգալիայում և Իտալիայում։ Անսեթևեթ լեզվով մեր ուղեգիրը նկարագրում է իր կյանքի դրվագները հայրենիքից հեռու ընկած երկրներում, հատուկ ուշադրություն դարձնելով տեսած բազմաթիվ քաղաքների ու վանական հաստատությունների շինվածքի, նրանցում ապփուլ սրբությունների վրա⁵։

Դեռ չէր ավարտել իր դեգերումները Ավգուստինոս Բաջեցին, երբ աշխարհ տեսնելու, տարբեր ժողովուրդների կյանքն ու կենցաղը ուսումնասիրելու մեծ ծրագրով ճանապարհորդական գավազան վերցրեց ու Լվով քաղաքից դուրս եկավ օտար երկրներ թափառելու հայ ուղեգրական գրականության իսկական ռահվիրա՝ մեծատաղանդ Սիմեոն դպիր Լեհացին։ 1608 թ. սկզբներին դուրս գալով Լվովից, նա եղավ Ստամբուլում, Մարմարի և Էգեյան ծովերի առափնյա քաղաքներում, Վենետիկում, Հռոմում, Ֆլորենցիայում, ապա Փոքր Ասիայում ու Հայաստանում, Փոքրասիայում, Պաղեստինի սրբավայրերում, Սիրիայում և այլ վայրերում։ Խորաթափանց և սրատես մեր ուղեգիրը լայն աշխարհայացքի և դեմոկրատական հայացքների տեր մի անձնավորություն, իր գեղեցիկ գրվածքի մեջ ոչ միայն ոգևորությամբ ու կենդանի գծերով նկարագրում է տեսած վայրերի արժանահիշատակ հուշարձանները, այլև հատուկ ուշադրություն դարձնում ժողովրդական-աշխատավորական խավերի տնտեսական ու իրավական վիճակի վրա, մասնավորապես բացահայտում Թուրքական կայսրության տաժանակիր լծի տակ կեղեքվող ժողովուրդների թշվառ ու իրավազուրկ կյանքի իրական պատկերը։ Սիմեոն դպիր «Ուղեգրությունը» առաջնակարգ սկզբնաղբյուր է նաև հայկական սփյուռքի ու հարավ-արևելյան եվրոպայի մի շարք երկրների պատմության համար⁶։ Նշանավոր այս աշխատությամբ ավարտվում է միջնադարյան հայ ուղեգրությունների շղթան, և գրականության այդ ժանրը դուրս է գալիս խանձարուրային իր վիճակից։

Սույն հրապարակումով ընթերցողների ուշադրությանը ներկայացվող ուղեգրությամբ լրացվում է եվրոպական երկրներ այցելած ու իրենց տպավորությունները գրանցած հայ ուղեգիրների աղբյուրի ցանկը՝ XVI դարի վերջին տասնամյակներին ապրած Սարգիս արեղայի անունով։ Այս նոր ուղեգիրը իր փոքրածավալ գրվածքով ընդարձակում է մեր գիտելիքները եվրոպական երկրների, ինչպես նաև նորահայտ Ամերիկայի վերաբերյալ միջնադարյան Հայաստանում ամբարված տեղեկությունների մասին, միաժամանակ օգտակար տվյալներ հաղորդում իր այցելած երկրների, մասնավորապես Սպանիայի ու Պորտուգալիայի հիշարժան վայրերի, տնտեսական և քաղաքական դրության վերաբերյալ։

* * *

Առաջին աշխարհամարտի դժնդակ ու ողբերգական տարիներին Արևմտյան Հայաստանի ողջ տարածքի վրա, մարդկային պատմության մեջ աննախագիս վայրագությամբ, թուրք բարբա-

⁴ Ա. Շ. Հ ո վ ճ ա ն ն ի ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 74։

⁵ Տպագրված է Ք. Պատկանյանի «Նշխարք մատենագրության Հայոց» աշխատության մեջ (Ս. Պետերբուրգ, 1884, էջ 5—23) «Ավգուստինոսի Բաջեցույ Ճանապարհորդութիւն յԵւրոպայ» խորագրով։

⁶ Սիմեոն դպիր Լեհացույ, Ուղեգրութիւն, տարեգրութիւն և յիշատակարանք, ռուսումնասիրեց և հրապարակեց Հ. Ներսէս վ. Ակինեան, Վիեննա, 1936, Симеон Лехаци, Путевые заметки, перевод с армянского, предисловие и комментарии М. О. Дарбинян, М., 1965.

րոսների կողմից ոչնչացվեցին հայ ժողովրդի ստեղծած նյութական ու հոգևոր մշակույթի անդնահատելի հուշարձանները: Ավերակների կույտի վերածվեցին միջնադարյան մշակույթի կենտրոնները՝ հարյուրավոր վանքեր ու եկեղեցիներ, խարույկի զոհ դարձան հազարավոր ձեռագիր մատյաններ՝ դիտական աշխարհին անծանոթ բովանդակությամբ՝ զարդարված շքեղ մանրանկարներով ու կազմերով:

Փրկվեց մշակութային գանձերի հազիվ մեկ տասներորդը:

Սակայն պատմական Հայաստանի հեռավոր խորշերում ծվարած փոքրաթիվ հայկական համայնքներում, իսկ ավելի մեծ չափով հայերի տուն ու տեղին տեր դարձած թուրք և քուրդ նորաբնակների մոտ, պատահականորեն տվյալներից դատելով, եղել են ու դեռևս կարող են հայտնաբերվել հայ մշակույթի բնաջնջված հուշարձանների բեկորներ, ձեռագիր արժեքավոր մատյաններ, դիվանական կարևոր փաստաթղթեր:

Հրաշքով փրկված այսպիսի մի հուշարձան է Սարգիս աբեղայի «Ուղեգրությունը», որի միակ ձեռագիր ընդօրինակությունը 20—25 տարի առաջ գտնվել է Դիարբեքիում (Տիգրանակերտ), տեղի հոգևոր հովիտի ջանքերով: Այդ ձեռագիրը 1950 թ. մարտի 17-ին վերականգնվել է Կ. Պոլիս, մտել անվանի դրագետ Թորոս Աղատյանի (1895—1955) հավաքածուի մեջ (այս մասին համառոտ հիշատակություն կա ձեռագրի վերջին էջի վրա): Վերջինիս մահվանից հետո, հանգուցյալի այրու կողմից, բազմաթիվ այլ ձեռագրերի ու մեծարժեք արխիվային նյութերի հետ մեկտեղ, ձեռագիրն ուղարկվել է Հայաստան՝ Ե. Զարենցի անվան դրականության և արվեստի թանգարան:

1958—1961 թթ. թանգարանը Մատենադարանին է հանձնել Թ. Աղատյանի արխիվի մեջ Լ. Ղող միջնադարյան հայերեն ձեռագրերը, որոնց շարքում նաև այժմ Մատենադարանի 9832 համարի տակ գրանցված ու մեզ հետաքրքրող փոքրածավալ գրչագիր մատյանը, որի առաջին նյութ-միավորը Սարգիս աբեղայի «Ուղեգրությունն» է⁷:

Ենթադրում էինք, որ կարևոր այս բնագրի մասին Աղատյանը կարող էր որևէ հիշատակություն արած լինել իր թղթերում կամ հաղորդագրություն տպագրած Կ. Պոլսի պարբերականներում, մասնավորապես, «Ժամանակ» օրաթերթի մեջ, որին աշխատակցում էր իր կյանքի վերջին տարիներին: Սակայն նրա արխիվի նյութերի ցուցակներում, ինչպես նաև հոգվածների խնամքով հավաքված կտրոնների մեջ որևէ հիշատակություն այդ «Ուղեգրության» ու նրա հայտնաբերման մանրամասնությունների մասին չգտանք: Ուստի Սարգիս Աբեղայի «Ուղեգրությունը» նորությամբ է հայ մատենագրության համար:

* * *

«Ուղեգրության» միակ ձեռագիրը՝ թերի է սկզբից. պահպանված առաջին թերթն սկսվում է «...Թուխ կասնու՝ Վանք մի կա Կ (60) հափեղայ կայ ի մէջն... սուրբ Նիկողիոս հայրապետի մարմինն մէջն է» բառերով: Տարակույս չկա, որ Սարգիս աբեղան «Ուղեգրության» այս հատվածում նկարագրում է Նիկողայոս հայրապետին նվիրված նշանավոր սրբատեղին, որ գտնվում էր Զմյուռնիա (Իզմիր) քաղաքում⁸: Այստեղից նավով նա մեկնում և հասնում է Հոնիական ծովի Խապալա (Kephallinia) կղզին, հայտնելով, որ «Ըստամպալէն մինչև ի հոն ԾՁ (56) արն հա-

7 Գ. Սրվանձտյանցը 1881 թ.-ից առաջ Լոկա է Դիարբեքիում (Տիգրանակերտ) և համառոտակի գրանցել Ս. Սարգիս և Ս. Իրապետ եկեղեցիներում, Առաջնորդարանում և մասնավոր անձանց մոտ եղած 93 ձեռագիր մատյաններ, ինչպես նաև 42 ձեռագիր՝ Զնքուշի Սիրահայաց Ս. Աստվածածին վանքում (տե՛ս Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, մասն Բ, Կ. Պոլիս, 1881, էջ 410—488): Սարգիս աբեղայի «Ուղեգրությունը» պարունակող ձեռագիրը նրա տեսած ու նկարագրած ձեռագրերի մեջ չի եղել:

8 Թ. Աղատյանի մոտ եղել են նաև այլ ձեռագրեր ու փաստաթղթեր, որոնց մի մասը ձեռք է բերել ծանոթ բանասեր Հ. Քյուրդյանը. «Քանի մը տարի առաջ,— գրել է նա,— ողբացյալ Թորոս Աղատյանի շնորհիվ, բազմաթիվ հին ու նոր ձեռագիրներ, տետրակներ և դիվանական թուղթեր ձեռք բերի Կ. Պոլիս» (Ցուցակ հայերէն ձեռագրաց Նիկոմիդիոյ և շրջակայից, Վենետիկ, 1969, էջ 67):

9 Ձեռագրի համառոտ նկարագրությունը տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հատ. Բ, Երևան, 1970, էջ 1000: Տե՛ս նաև Օ. Եգանյան, Մատենադարանի ձեռագրական հավաքածուները, Երևան, 1965, էջ 175:

10 Տե՛ս Մ. Աւգերեան, Լիակատար վարք և վկայաբանություն, 1813, էջ 305—340. «Վարք Սրբոյն Նիկողայոսի սքանչելագործ հայրապետին Զմիռնոյն»:

սաք»։ Պարզ է դառնում, ուրեմն, որ նա Չմյուռնիայից առաջ եղել է Կոստանդնուպոլսում (Ստամբուլում), բայց անորոշ է մնում, թե որտեղից է սկսել իր ճամփորդությունը Այդ մասին «Ուղեգրության» մեջ չկա որևէ ցուցում կամ ակնարկ։

«Ուղեգրության» լեզուն, անտարակույս, արևմտահայ բարբառների խմբին է պատկանում. Սարգիս արեղայի խոսվածքում պարզ նկատվում է ձայնեղների խլացում՝ բ>պ (Բլուա—Ապիլայ, Բուրդոս—Պըրդուս, Բենեվենտո—Պենուվենդ և այլն), դ>տ (դ'Աքս—տ'Աքս, Պագուա—Պատվայ, Կորդովա—Գորտովայ և այլն), զ>կ (Մալադա—Մալակայ, Կրանադա—Ակրանաու և այլն)։ Նրա համար սովորական են արևմտահայերենին հատուկ՝ հոն (այնտեղ), ալ (սթե քաղաք ալ անցայ), մն (սեկեղեցի մն կայ), մ'ալ բառ-դարձվածքները։ Ուշագրավ է նաև այն, որ նա չգտագործում է թուրքերեն կամ թուրքերենի միջնորդությամբ յուրացված մի շարք բառեր, ըստ ձևության չիմանալով դրանցից շատերի հայերեն հոմանիշները¹¹։

«Ուղեգրության» վերջին դրվագում մեր ճանապարհորդը հայտնում է, որ Աղքերման քաղաքում նաև նստելով, նա անցել է Սև ծովը և մեկ ամիս նավելով հասել Հայաստան (սև ամիս ծովն կացի, հասա Հայաստան)։ Շարադրանքի այս ձևը կարծել է տալիս, որ նա, կտրելով Սև ծովը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք, ափ է իջել հավանաբար Տրապիզոնում և, առանց նոր ու երկարածիգ դեգերումների, հասել իր հայրենի գավառը, որ կարող էր լինել Բարձր Հայքի շրջաններից մեկը (ամենայն հավանականությամբ Երզնկան)։

Կան նաև այլ նկատառումներ Սարգիս արեղայի պատմա-աշխարհագրական այդ միջավայրի հետ կապելու։

Գիտենք արդեն, որ 1489—1496 թթ. եվրոպական երկրներում ճամփորդել է Մարտիրոս Երզնկացին, որը ներկայանում է իր ընթերցողներին այսպես. «Մարտիրոս միայն անուամբ եպիսկոպոս Եզնկացի, ի սուրբ Կիրակոսու տնայապատէն, ի նորգեղակ գեղէն»։

Ս. Կիրակոսի և Յուդիտայի վանքը գտնվում է Երզնկայի հարավում, մեկուկես ժամ հեռավորության վրա։ Երկար ժամանակ եղել է Երզնկայի առաջնորդարանը և սիրված ուխտատեղի։ Կանգուն էր մինչև վերջին ժամանակներս¹²։

Մարտիրոսի և Սարգսի ուղեգրությունների առաջին կեսի բաղդատությունից զարմանալի նմանություններ են ի հայտ գալիս։ Վերջինս, կարծես, տեղյակ է իրենից ճիշտ մեկ դար առաջ

¹¹ Տալիս ենք այստեղ Սարգիս արեղայի «Ուղեգրության» մեջ առկա այդ բառերի այբբենական ցանկը.

Գյամի (թուրք.)—նավ
Ջնճիլ (պրսկ.)—շղթա
Թաճ (պրսկ.)—թագ
Իսպիտալ, իսպիտալիս (լատ.)—հիվանդանոց
Խանայ (պրսկ.)—տուն
Խասաֆ, իմա դասաբ (արաբ.)—մսագործ
Խասապխանայ (արաբ.-պրսկ.)—սուլեղանոց, մսավաճառի խանութ
Խատար—տե՛ս Ղատար
Խարճ (արաբ.)—ծախս
Կամի—տե՛ս գյամի
Ղատար (արաբ.)—որքան, քանակ
Ճամ (թուրք.)—ապակի
Միլաթ (արաբ.)—ժողովուրդ, կրոնական համայնք
Մոյտան (պրսկ.)—հրապարակ
Նաշ (արաբ.)—դիակով դագաղ, պատգարակ
Պուրճ (պրսկ.)—բուրգ
Պազազ (արաբ.)—կերպասավաճառ
Պաղի (արաբ.)—մնացյալ, ուրիշ
Տապաղայ (արաբ.)—հարկաբաժին
Տարպայ (արաբ.)—անգամ
Տոնանմայ (թուրք.)—նավատորմ
Ֆութա (արաբ.)—մարմնի ծածկույթ, ղենչակ
Ֆութանա (հուն., թուրք.)—փոթորիկ

¹² Հ. Հ. Ո ս կ յ ա ն, Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1951, էջ 82—89։

ճամփորդած Մարտիրոսի երթուղուն, և քայլ առ քայլ հետևում է նրան. մեր երկու ճանապարհորդներն էլ Վենետիկից նախ անցել են Հռոմ, ապա Իտալիայից մտել Շվեյցարիա, կանգ առել Կոնստանց քաղաքում, անցել Բադել և Հունոսի առափնյա քաղաքներով (Ստրասբուրգ, Կոբլենց, Քյոլն) բարձրացել են հյուսիս, եղել Աախենում, Անվերսում (Անտվերպեն), Ֆլանդրիայի քաղաքներում և մեկնել Անգլիա:

Սարգիս արեղայի ընտրած երթուղին չէր կարող այսպիսի ճշգրտությամբ համընկնել Մարտիրոս հայկոպոսի երթուղու հետ, եթե նա ծանոթ չլիներ իր նախորդի ճամփորդական հուշագրությանը, որի ձևագիրը, անշուշտ, պահվում էր Ս. Կիրակոսի վանքի մատենադարանում¹³։ Ուրեմն, կարելի է ենթադրել, որ Սարգիս արեղան կամ նույն Ս. Կիրակոսի վանքի վանական է եղել, կամ էլ Երզնկայի շրջակայքի մի այլ վանքում լինելով, հնարավորություն է ունեցել այցելելու Ս. Կիրակոս և ծանոթանալու Մարտիրոս հայկոպոսի այնտեղ պահվող ձևագրին:

Որ նույն միջավայրից են դուրս եկել մեր երկու ուղեգիրները, պարզ երևում է նաև նրանց գրվածքների մի շարք հատվածների նույնությունից: Եթե անտեսենք խմբագրական ու գրչագրական ոչ էական տարբերությունները, ապա Սարգսի «Ուղեգրության» գրեթե մեկ-երրորդ մասն ընդօրինակված է Մարտիրոսի «Ուղեգրությունից»:

Համընկնում են, հատկապես, հետևյալ հատվածները.

1. Վենետիկ քաղաքի և Ս. Մարկոսի հրապարակի ու եկեղեցու նկարագրությունը.
2. Հռոմի ու շրջակայքի սրբությունների նկարագրությունը.
3. Կոլոնիա (Քյոլն) քաղաքին նվիրված ընդարձակ հատվածը.
4. Սանտա-Մարիա դ'Աբս (Աախեն) քաղաքի Ս. Աստվածածնի եկեղեցու նկարագրությունը.
5. Անվերս քաղաքի մասին պարբերությունը.
6. Փարիզի և, մասնավորապես, Նոտր-Դամի նկարագրությունը:

Բառացի արտագրված են, սակայն, Մարտիրոսի «Ուղեգրությունից» միայն այն պարբերությունները, որոնք վերաբերում են քաղաքի տեսարժան վայրերի՝ ըստ մեծի մասին նշանավոր վանքերի ու եկեղեցիների՝ արտաքին տեսքին ու զարդարանքին: Բոլոր այն հատվածները, որոնք ճանապարհորդության մանրամասներին են վերաբերում, ինչպես և սպասելի էր, խիստ տարբերվում են միմյանցից¹⁴:

Արդ, ի՞նչ ճանապարհով են Մարտիրոսի նկարագրությունները մտել Սարգիս արեղայի «Ուղեգրության» մեջ: Ի՞նքն է քաղել դրանք, թե՞ մեկ ուրիշը:

Վերահիշյալ հատվածների ուղեգիր քննությունը մեզ բերում է այն համոզման, որ Սարգիսն ինքը չէր կարող այդ բանաբաղությունները կատարել: Երբ ծանոթանում ենք Սարգսի «Ուղեգրության» երկրորդ՝ անաղարտ պահպանված հատվածին, ակնհայտ է դառնում մեր հեղինակի սեղմ ու համառոտ գրելաոճը: Ըստ նրա ծրագրի, առաջին հերթին, հիշատակության արժանի են նշանավոր քաղաքների բնական և արհեստական շինությունները (տներով հաշված), կարևոր սրբավայրերի ու սրբոց մասունքների մասին և զրությունները և իր ճանապարհի հիշարժան կանգառների անվանական կամ թվական (Ե (3) քաղաք ալ անցայ, Ե (5) քաղաք ալ անցայ և այլն) հաշվառումը (երթուղին ճշգրտորեն ներկայացնելու մտահոգությամբ):

Այս համեստ ծրագիրը խախտված է որոշ տեղերում ազգագրական, պատմական ու տնտեսական երևույթների մասին հակիրճ գրանցումներով, սակայն ընդհանուր առմամբ Սարգիսը հարազատ է մնում իր որդեգրած ծրագրին: Նրա գրելաձևին անհարիր են հենց այն հատվածները, որոնք, ինչպես ասացինք, գրեթե բառացի ներմուծված են Մարտիրոս Երզնկացու «Ուղեգրությունից»:

¹³ Ս. Կիրակոսի վանքն ունեցել է հարուստ ձևագրատուն, որը հետո կողոպտվել է (Հ. Ոսկյան, նշվ. աշխ., էջ 89):

¹⁴ Այսպես, օրինակ, Մարտիրոս Երզնկացին Վենետիկում մնացել է ընդամենը 29 օր, հայտնում է, որ քաղաքում կա 74 հազար տուն, իսկ Սարգիսը 2 ամիս է եղել և Վենետիկի բնակչության մասին այլ տվյալ է հաղորդում (100 հազար տուն): Մարտիրոսը 7 ամիս մնացել է Հռոմում և օրական 10—20 եկեղեցի այցելել, իսկ Սարգիսը, որ միայն 2 ամիս է մնացել, ստիպված է եղել ավելի շտապ դիտել քաղաքի սրբավայրերը (օրական շրջագայել է 20—30 եկեղեցի): Աախենում Մարտիրոսը մնացել է 18 օր, Անվերսում՝ 11, իսկ Սարգիսը, ճամապատասխանաբար, մեկ ամիս և 4 շաբաթ: Մարտիրոսի 13 օրվա դիմաց Սարգիսը Փարիզում մնացել է 2 ամիս և այլն:

Այդ ներմուծումներ կատարող խմբադիրը չէր կարող ինքը՝ Սարգիս արեղան լինել, որովհետև բանաբաղված հատվածներում տեղ են գտել Մարտիրոս Եպիսկոպոսի անձնական կյանքի մի քանի դրվագներ, ինչպես նաև թյուրիմացություններ, որոնք բացատրելի են միայն խմբագրի անտեղյակությամբ:

Այսպես, օրինակ, Բաղել քաղաքում Մարտիրոս Երզնկացուն բանտարկել են և նեղացրել՝ կասկածելով լրտեսության մեջ: Նույն այս դրվագը ներմուծված է նաև Սարգսի «Ուղեգրության» մեջ: Մարտիրոս Եպիսկոպոսը եղել է Սեն-Դենի քաղաքում (Փարիզի մոտակայքում), որ «Եպիսկոպոսաց և թագաւորաց և թագուհոց զերեզմանատուն է»¹⁵։ այստեղ գլխավոր եկեղեցում նա տեսել և վարմանքով նկարագրել է ահռելի մեծության ձկան կողեր:

Սարգիսը Սեն-Դենիում չի եղել. այս հանգամանքը, սակայն, չի խանգարել խմբագրին նրա «Ուղեգրության» մեջ ներմուծելու այդ վայրի մասին Մարտիրոսի զրանցած տողերը, դրանք վերագրելով Աթուռ (Troyes) քաղաքին:

Այս կարգի խմբագրական «վրիպակներ» մի շարք այլ օրինակներ կարելի է մեջ բերել, որոնք իրար լրացնելով վկայում են հոգուտ այն իրողության, որ Մարտիրոս Երզնկացու «Ուղեգրության» վերոհիշյալ հատվածները մուծվել են Սարգսի «Ուղեգրության» մեջ ևրորոգ մի անձնավորության ջանքերով, որը խմբագրի դեր է ստանձնել անձամբ համափորձած չլինելով և վրոպական երկրներում: Այդ խմբագրի ձեռքի տակ եղել են Մարտիրոս Երզնկացու (ընդամենը 2 ձեռագիր ընդօրինակություններով մեղ հայտնի) և Սարգսի (նոր միայն հայտնաբերված) «Ուղեգրությունները», որոնք ամենայն հավանականությամբ պահվում էին վանական այն հաստատության գրատանը, որի միաբաններն են եղել մեր ուղեգիրները: Մարտիրոսը, գիտենք արդեն, Երզնկայից ոչ հեռու գտնվող Ս. Կիրակոսի վանքից էր. վերոհիշյալ նկատումներով նույն այդ միջավայրի ծնունդ ենք համարում նաև Սարգիս արեղային:

* * *

Երբ է համափորձել և քանի՞ տարի են տևել Սարգիս արեղայի ղեկերումները:

Իր «Ուղեգրության» Փարիզին նվիրված հատվածում նա հայտնում է, որ «թագաւորն Լուդրան էր զնացեր ԿԻ (60.000) մարդով, խոստովանահարն սպանեց զթագաւորն թվ. ՌԼԸ (=1589), քաղքին դովին փակեցին և ամիս մն չի բացին, մէջն մնացի մինչև բացին, շատ շար քաշեցին: Ըստ այդմ մեր ճանապարհորդը Փարիզում եղել է քաղաքացիական լարված պայքարի ու բախումների ժամանակաշրջանում: Փարիզյան Լիգայի հրամանի ներքո գործող զինվորական ուժերը, որ հիմնականում բաղկացած էին քաղաքի արհեստավորական շերտերից, պարտության էին մատնել վալուա դինաստիայի (Ֆրանսիայում իշխել է 1328-ից) վերջին զահակալ Հենրիկոս թագավորին (1551—1589). վերջինս ապավինել էր Հենրիկոս Նավարացու ողորմածությանը, սակայն ապստամբությունը խեղդելու պատրաստություններ էր տեսնում: 1589 թ. օգոստոսի 2-ին Դոմինիկյան վանական Ժակ Կլեմանին հաջողվում է մոտենալ թագավորին և սրախողխող անել նրան¹⁶:

Սարգիս արեղան ականատես է եղել այս դեպքերին, ուստի գտնվել է Փարիզում 1589 թ. օգոստոս—սեպտեմբեր ամիսներին (2 ամիս):

Ժամանակագրական հաջորդ տեղեկությունը զրանցված է Սպանիայի վալենսիա քաղաքում. անդադրում հետիոտն երթևեկից հոգնած մեր ճանապարհորդը դիմում է տեղի հոգևորականներին ու խնդրում մի նավ գտնել Իտալիա վերադառնալու համար. «Մարմնու կարիքս (իմս՝ ուժս) հատաւ, որ Դ (4) տարի է կու քալիմ»,— գրում է նա:

Ստորև առի՛ն կունենանք մանրամասն ծանոթանալու Սարգսի ղեկերումների երթուղու հետ: Անհրաժեշտ է, սակայն, նշել այստեղ, որ Փարիզից վալենսիա հասնելու համար մեր ուղեգիրն անցել է Նանտ, ապա նավարկել Բիլրատ (նավարկությունը տևել է 25 օր), մեկնել է նշանավոր ուխտավայր Սանտյագո քաղաքը, Սպանիայի հյուսիս-արևմտյան շրջաններում ղեկերել 8 ամսից ավելի, այնուհետև եղել է Պորտուգալիայում, Գրենադայում, Անդալուզիայում և Սպանիայի կենտրոնական ու արևելյան նահանգներում: Հաշվի առնելով այս բոլորը, կարծում ենք, որ Փարիզից մինչև վալենսիա հասնելու համար մեր ուղեգիրը թափառել է առնվազն մեկ ու կես տարի՝ մինչև 1591-ի առաջին ամիսները: Եվ քանի որ իր համափորձությունն սկսել է 4 տարի դրանից առաջ, ուրեմն հայրենի երկրից դուրս է եկել 1587 թ. սկզբներին:

¹⁵ «История средних веков», том II, под редакцией С. Д. Сказкина, Москва, 1954, т. 2 304—305:

«Ուղեգրության» վերջում նա հայտնում է, որ «Թվ. Ռեկ. (= 1592) հասա Հայաստան», — ուստի ճամփորդել է 1587—1592 թթ., դեգերումների մեջ լինելով շուրջ 6 տարի:

* * *

Հետևենք այժմ Սարգիս արեղայի երթուղուն, անհրաժեշտ պարզաբանումներ կատարելով, ճշտելով և սրբազրելով ձևափոխված ու աղճատված տեղանունները¹⁶։ Նպատակահարմար ենք գտել «Ուղեգրության» մեջ նշանակված բոլոր տեղանուններին առընթեր՝ փակագծերի մեջ՝ նշել դրանց ճիշտ ձևը լատինական տառադարձությամբ։ Ներդիր քարտեզի վրա նույնպես ցույց է տրված մեր ճանապարհորդի երթուղին իր բոլոր կանգառներով։

1587 թ. սկզբներին Սարգիս արեղան դուրս է եկել, հավանաբար, Երզնկայից, անցել Կոստանդնուպոլիս (ինքը գրում է Ստամպոլ)։ Այստեղ նա էլ նստել, կարճատև ափ իջել Ջսյունիայում և 56 օր նավելով հասել Հոնիական ծովի հապալայ (Kephallinia) խոշոր կղզին։ Վեց օր մնալով գտել է եվրոպական մի նավ ու շարունակել իր ճանապարհը։ Նավը, որ Վենետիկ էր դնում, առաջին անգամ խարխսի է նետել Վենետիկի հասարակապետությանը պատկանող Դալմաթիայի Զատրայ (Zara, Յադար) քաղաքում, որն իրավացիորեն Սարգսի կողմից «առաջի քաղաքն Ֆրա[ն]կաց» է կոչված։ Այնուհետև լինում է Իստրիայի Ուրովին (Rovigno) և Փանսույ (Parenzo) քաղաքներում, ապա Փափասար ու Տմաղու կոչված մեզ անծանոթ վայրերում և 30 օր նավի մեջ լինելուց հետո հասնում Վենետիկի մոտ, ս. Ղազարի հարավակողմը գտնվող Նազարեթ (Lazzaretto vecchio) կոչվող կղզին, ուր պարտադիր կերպով իջեցնում էին արևելյան երկրներից ժամանածներին, վարակիչ հիվանդություններից քաղաքն ապահովելու մտահոգությամբ։ 30 օր այստեղ մնալուց հետո մտնում է Վենետիկ և 2 ամիս շարունակ դիտում այդ շքեղ քաղաքի տեսարժան վայրերը։

Վենետիկից մեկնում է Հոռմ, անցնելով Պատվայ (Padua), Ռենանուլուին, Աֆոառ (Ferrara), Քամենց, Տրմադոյ¹⁷ և 15 այլ քաղաքներով (որոնց անունը չի տրված)։ Երկու ամիս է տեղում այս ճամփորդությունը։ Սարգիս արեղան դժվարություններ է կրում իտալերեն լեզվին անծանոթ լինելով, բայց այդ ընթացքում սովորում է. «Բայց լեզու ոչ էի գիտել, խիստ շարժարեցա մինչև սորվեցա», — գրում է նա։

Հոռմի ու մոտակա վայրերի նշանավոր սրբատեղիներում 2 ամիս շրջագայելուց հետո մեր ճանապարհորդը, 15 քաղաք անցնելով, դուրս է գալիս Պապական Նահանգից ու մտնում «Հոռմեական սրբազան կայսրության» սահմանները. «Հասայ Տուտէշ (իմա գերմանացի)¹⁸ ազգի աշխարհն, որ կասին Ալաման», — գրում է նա։

Հոռմից հետո առաջին քաղաքը, որի անունը գրանցել է Սարգիս արեղան, Բոդենի լճափին գտնվող Կաստենցիա (Konstanz) քաղաքն է. սահմանագլխից այստեղ հասնելու համար նա անցել է 10 այլ քաղաքներով, ընթանալով, հավանաբար, Պարմա—Միլան—Ցյուրիխ ուղեգծով։

Ուշագրավ է այն հանգամանքը, որ այս տարածությունը կտրելու ընթացքում մեր ճանապարհորդն այս անգամ էլ սովորում է գերմաներեն, այդ մասին հատուկ նշում կատարելով («Այն աշխարհն ալ լեզու չէի գիտել, շարժարեցաք մինչև սորվեցաք»)։

Հոռմից առաջին 20 քաղաքներ անցնելով Սարգիս արեղան հասնում է Բազել, ապա Ֆրուտ (Ferrette)¹⁹։ Այնուհետև, 10 քաղաք անցնելով, հասնում է Ֆրիբուրգ (Freiburg), ուր մնում է 20 օր։ Հաջորդ քաղաքն է Ստրազբուրգ (Strasbourg), ապա 20 քաղաք անցնելուց հետո՝ Կապլայ, որ անշուշտ Coblentz քաղաքն է։ Կոբլենցից 15 քաղաք անցնելով մեր ճանապարհորդը հասնում է «ի մեծայհամբալ քաղաքն ի Կալոնիայ», այսինքն Քյոլն (Cologne), ուր տեսնում և նկարագրում է շատ «զարմանալի բաներ»։

¹⁶ Այս նպատակով օգտագործել ենք Atlas Nouveau, contenant toutes les parties du Monde, par le Sr. Sanson, Paris, 1692 և Andrees algemeiner Handatlas, herausgegeben von A. Scobel, Bielefeld und Leipzig. 1901 նշանավոր ատլասները և քարտեզագրական այլ նյութեր։

¹⁷ Այս երկուսը, նախորդ՝ Ռենանուլուին կոչվածի նման, կամ աղճատված տեղանուններ են, կամ էլ աննշան վայրեր լինելով չեն նշանակված մեզ մատչելի քարտեզագրական նյութերի մեջ։

¹⁸ Գերմանացիներն իրենց Deutsch են անվանում, իտալացիները՝ Tedesco. Սարգիս արեղայի (ինչպես նաև Մարտիրոս Երզնկացու) Տուտէշը այս բառի աղավաղված ձևն է։

¹⁹ Գտնվում է Բազելից արևմուտք շուրջ 20 կմ հեռավորության վրա։

Քյոլնից, 15 քաղաք անցնելով, հասնում է Սանթա-Մարիա դ'Աբս, որ գերմանացիների կողմից Aachen, ֆրանսիացիների կողմից Aix-la-Chapelle կոչվող քաղաքն է։ Ապա, 17 այլ քաղաքներ տեսնելով, հասնում է միջնադարյան եվրոպայի արհեստագործության ու առևտրի նշանավոր կենտրոն, հայ վաճառականներին քաջածանոթ Յանվես (իմա՝ Անվերս կամ Անտվերպեն) քաղաքը։

Քսան ուրիշ քաղաքներ անցնելով մեր ճանապարհորդը մտնում է Ֆլանդրիա և սովորում նաև ֆլանդրերեն լեզուն։ Այս երկրում եղած քաղաքներից հիշատակում է միայն մեկը՝ կոչվելով «մեծ քաղաքն Առոմէ»։ Պժվար է ստույգ որոշել, թե այդ անվան տակ ո՞ր քաղաքն է նկատի առնված։ Բրյուսելի և Լյեժի կիսաճանապարհին կա Ռամիլյի (Ramillies) անունով մի քաղաք, որը չնայած Առոմէ տեղանվան հետ հնչյունական լավ համընկնում է (Ռամիլյի—Առոմէ), սակայն աննշան մի վայր է եղել, ուստի ենթադրում ենք, որ այդ անունը միջնադարյան Ֆլանդրիայի մահողագործության նշանավոր կենտրոն Սենտ-Օմեու քաղաքանվան աղճատ գրությունն է՝ առաջացած մ և ո տառերի դրսևորությունից (Օմեու—Առոմէ)։ Մեր ուղևորի տվյալներով այդ քաղաքն ունեցել է 180.000 տուն բնակիչ, 500 եկեղեցի։

Մեկ ամիս այստեղ մնալուց և 18 այլ քաղաքներ շրջելուց հետո Սարգիս արեղան ուղևորվում է «աշխարհն անկուղաց», այսինքն Անյոլիա, լինում Լոնդոնում, շրջում 25 այլ քաղաքներում (որոնց անունները դժբախտաբար չի նշում), սովորում նաև անգլերեն, ապա մեկնում Ֆրանսիա։ Այստեղ արդեն միանգամայն տարբերվում են Մարտիրոս Երվնկացու և Սարգիս արեղայի երթուղիները։ Վերջինս ավելի շուտ Ֆրանսիայի հյուսիսային նավահանգստներից մեկում, ուղևորվում է հարավ և առաջինը հիշատակում Սանդիսյայի մահացած քաղաքի անունը, որ նույնացնում ենք Սան-Դիզիե (St. Dizier) հետ։ Այդտեղից սպասելի էր, որ մեր ճանապարհորդը կանցնի Փարիզ, հռչակավոր այդ քաղաքի տեսարժան վայրերը ուսումնասիրելու համար։ Եսկայն մայրաքաղաքում տիրող խառնակ քաղաքական վիճակից երկյուղ կրելով, թե՛ հարմար հովանավոր-ուղեկից չգտնելով, նա հետաձգում է Փարիզ գնալը, հյուսիսից հարավ կտրելով ողջ Ֆրանսիան անցնում է Աթուո (Troyes), Այգուո (Dijon), Լեոն (Lyon) քաղաքներով և հասնում Մարսել (Marseille)։

Այս ճամփորդության ընթացքում նա սովորում է նաև ֆրանսերեն լեզուն։ Մարսելից ուղևորվում է Փարիզ, անշուշտ, ընտրելով մի այլ ճանապարհ (Թերես Նիմ—Կլերմոն-Ֆերան—Նեվեր—Ֆոնտենբլո ուղեգիծը)։ «Այլ Ժն (15) քաղաք անցայ, [հասայ] մեծ քաղաքն, որ կասեն Բարիզ»,— գրում է նա։

Փարիզի սրբավայրերի, մասնավորապես Նոտր-Դամի նկարագրությունը Սարգիս արեղայի «Ուղեգրության» մեջ ներմուծված է Մարտիրոսի «Ուղեգրությունից», բայց քաղաքի հիվանդանոցների, աղքատանոցների, դպրոցների և այլ հաստատությունների մասին նա զրանցում է հարցնում իմացած ուշագրավ տվյալներով՝ նշել ենք արդեն, որ կարևոր են մեր ճանապարհորդի զրանցած տողերը նաև Ֆրանսիայի քաղաքական դրության, Հենրիկոս III Վալուայի սպանությունից հետո ստեղծված խառնակ վիճակի մասին։

Սպանիա մեկնելու համար Սարգիս արեղան ուղևորվում է Նանտ նավահանգստային քաղաքը, անցնելով հետևյալ բնակավայրերով. Ուլիան (Orleans), Այիլայ (Blois), Անյուդայ (Amboise), Աթուրը (Tuors), Անճէշ (Angers), Առոմէր և Անանդ (Nantes)։


Ուշագիր ընթերցողը կնկատի, որ այս (ինչպես և նախորդ ու հաջորդ) տեղանուններից մի քանիսը Սարգիս Արեղայի գրչի տակ ձևափոխված են՝ հատկապես անվան սկզբում հավելյալ ա ձայնավոր ստանալով (Տրուա—Աթուո, Բլուա—Այիլա, Նանտ—Անանդ, Բիլբաո—Աիլվա և այլն)։ Ըստ երևույթին այդ առաջացել է ֆրանսերեն ուղղություն ցույց տվող և նախդիրի (դեպի, Ե նշանակությամբ) թյուրիմացաբար տեղանվանը կցելու հետևանքով։ Ֆրանսերեն նորսովորած մեր ուղևորը դյուրութեամբ կարող էր իր յսած a Nantes-ը ընկալել որպես Անանդ, կամ a Blois-ը՝ Այիլայ և այլն։

Նանտից նավով Սարգիս արեղան մեկնում է «Սուրբ Յակոբայ աշխարհն»—Սպանիա։ «Ուղեգրության» այս հատվածն ամենահետաքրքրականն ու կարևորն է։ Միջնադարյան հայ ճանապարհորդներից ոչ մեկը չի կարող մրցել Սարգիս արեղայի հետ Սպանիայի անծայրածիր տարածքի վրա այդքան երկար քայլելով և այդքան կարևոր տեղեկություններ զրանցած լինելով։

Երեք հարյուր մղոն ծովային ճանապարհ կտրելով և 25 օր նավելով, մեր ուղևորը ավելի է իջնում Սպանիայի Բիլբաո քաղաքում և առանց շտապելու, նշանավոր քաղաքներ ու տեսարժան սրբավայրեր այցելելու համար շեղումներ կատարելով, ուղևորվում այդ երկրի հյուսիս-արևմտյան ծայրամասում գտնվող Սանտյագո դե Կոմպոստելա աշխարհահռչակ վանքը։ Այս է նրա երթուղին. Աիլվայ (Bilbao)—Պուրդուո (Burgos)—Վալադոլիդ (Valadolid)—Սալամանք (Sala-

ՍԱՐԳԻՍ ԱԲԵՂԱՅԻ ՃԱՆԱՊԱՐՎՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂԵԳԻԾԸ (1587-1592թթ.)

Լ. ՆԱԳԻԿՅԱՆԸ
Գ. ՃԱՆԱԳԱՆՅԱՆԸ



ԴԱՅՄԱՆԱԿԱՆ ԼԵՂՆԵՐ
ԱՍՏԻՍԱՆԱԿԱՆ ԵՐԵՄԻԱՆ
ԵՐԵՄԻԱՆ ԵՐԵՄԻԱՆ ԵՐԵՄԻԱՆ

manca) — Սամուլայ (Zamora) — Պենուվենդ (Benuvente) — Մէդինա էլ Գամբա (Medina del Campo) — Մէդինա Ըռուշէք (Medina de Rioseco) — Սիմանգաս (կամ Տիմանդաս) — Դոնդայտէլ — Լէվոն (Leon) — Վիլայֆրանկա (Villafranca) — Աստորգա (Astorga) — Սուրբ Յակոբ առաքելի զերեդման (Santiago de Compostella)։

Այստեղ ուխտ է անում, սակայն սրբի զխառնալ մարմինը (զուխը, բոստ ավանդության, թաղված է Նրուսաղեմի Սուրբ Յակոբյանց հայկական վանքում) չի կարողանում տեսնել, քանի որ զևալի սրբի զերեդմանը տանող միակ դուռը բացելիս են ևղել միայն 7 տարին մեկ անգամ²⁰։ Սարգիս արևդան ուրախությամբ տեղեկանում է, որ Ց ամսից հետո է լինելու բաղձալի ուխտի օրը, ուստի, ինչպես ինքն է ասում, «Ելայ, զնացի, ութ ամիս շուտ եկի, շատ քաղաք ու գեղ, վանորոք, ուխտայտեղ, վանք տեսայ, անկից դարձայ ճանփով մ'ալ եկի, հասայ Սուրբ Յակոբ ըխտին»։ Ամիսներ տեղոյ այս զերեդմանների մասին այլ տվյալ չի գրանցված։

Այնուհետև Սարգիսն ուղևորվում է Լ'գր աշխարհի (Finisterre) կոչվող հրվանդանի Աստվածածնի վանքը, ապա իջնելով հարավ, լինում է Բադրոն (Padron), Փոնթեպեդրա (Pontevendra) և Ադուու (Tuy) քաղաքներում, անցնում մի գետ (անշուշտ Մինյո գետը) և մտնում «Փոռթուկալաց աշխարհն»։

Ձմռանանք ասել, որ մինչ այդ, իր իսկ վկայությամբ, նա սովորել էր սպաներեն լեզուն, իսկ Պորտուգալիա մտնելու մասին տեղեկությունը գրանցելուց անմիջապես հետո Սարգիսն շտապում է, յոթերորդ անգամ լինելով, արձանագրել իր սիրած բանաձևը. «Հոն ալ լեզու շէի գիտիլ, չարչարեցայ, մինչև որ ուսայաւ Այսպիսով, ընդամենը 3—4 տարում մեր ճանապարհորդը, որ հայերենից բացի անշուշտ գիտեր թուրքերեն, գուցե և հունարեն լեզուները, սովորում է իտալերեն, դերմաներեն, ֆլանդրերեն, անգլերեն, ֆրանսերեն, սպաներեն և պորտուգալերեն լեզուներով պարզ նախադասություններ կազմել. հարց ու փորձ անել, հասկանալ թե ուր պետք է գնալ, ինչ տեսնել և այլն։ Ըստ այդմ մեր ուղեգիրը լեզվագիտական մեծ ընդունակություններով օժտված անձնավորություն է եղել։

Պորտուգալիայում Սարգիս արևդան լինում է Վալենցա (Valencia), Կամէնայ (Caminba), Բրակայ (Braga), Վիլա-Նովայ (Villa Nova), Վիանայ (արդյո՞ք Villa de Conde) և 3-րդ քաղաքներում (անունները չի տալիս), ու հասնում է Փոռթ (Porto) կոչվող մեծ քաղաքը։ Ապա, ինչպես ինքն է ասում, «Ելայ, զնացի մտայ ի ծոփն, ելայ Կալայա. պեք է ենթադրել, որ ծով է կոչում Դիեգո գետի լայն զետարերանը, իսկ Կալայ կոչվածը հավանաբար Villa Nova de Gata (Գայա-Կալա) բնակավայրն է։ Այստեղից էլ 3 քաղաք է անցնում, հասնում է Կոլմորայ (Colmora), ապա Սանթարին (Santarem) — Վիլա Նովա — Կաստինհար (Castinhera) — Ջաբապին և Լիզբոյ (Lisboa), այսինքն Լիսաբոն։

«Խիստ մեծ քաղաք է», — ասում է մեր ուղեգիրը Լիսաբոնի մասին և հայտնում, որ բնակչությունը 100 հազար տուն է, 500 նավ է կանգնում նավահանգստում, 300 եկեղեցի ունի և այլն։ Ասում է նաև, որ տեսակցություն է ունեցել թագավորի հետ, մեծարվել նրա կողմից ու շնորհմանքներ ստացել։ Պետք է, սակայն, նկատի ունենալ, որ Սարգիս ճամփորդությունից դեռ 10 տարի առաջ (1581 թ.) Դոն Սերաստիանոս թագավորի մահվանից հետո Պորտուգալիան բռնի միացվել էր Սպանիային։ Ուստի, պետք է ենթադրել, որ Սարգիս արևդային ընդունել ու պատվել է փոխարքան կամ քարձրաստիճան մի պաշտոնյա։

Լիսաբոնից մեր արևդան նավով մեկնում է Կոն անվանած քաղաքը, որի տեղագրությունը անորոշ է մնում, ապա Սեթուբ (գուցե Setubal) և Բունդայլիմմայ (կրկին անորոշ բնակավայր, գուցե խիստ աղճատ անուն)։ Այստեղից, դարձյալ նավով, մեկնում է Այամոնթ (Ayamonte), որը Պորտուգալիայի հարավ-արևելյան սահմանագլխին գտնվող առաջին սպանական քաղաքն է։

Այամոնթից 5 քաղաք անցնելով, Սարգիսը հասնում է Սիվիլիայ (Sevilla), որի բնակչության թիվը 80 հազար ընտանիք է հաշվում. ասում է, որ «առջև քաղաքին մեծ գետ մն կայ» (նկատի ունի, անշուշտ, Գվադալկիվիրը), որի վրա բազմաթիվ թագավորական նավեր են կանգնած։ Ենթադրելով իր «Ուղեգրության» բուն նյութից, նա մի ընդարձակ հատված է նվիրում նոր Հունդուս-

20 Այս տեղեկությունը թաղում ենք Ավգուստինոս Բաջեցու «Ուղեգրությունից» («Ե մէկ դուռն կայ եկեղեցուն՝ մօտ գերեզմանին, որ կոչին դուռն ողորմութեան, որ է (7) տարէնն մէկ հետ կու բացի ու երանի այնոցիկ, որ այն աւուրն որ բացուի՝ հոն լիցի», — գրում է նա)։

21 Այս և մյուս տեղանունները, որոնց աղբյուրները չեն տրված նրանց ճշգրտված անունները լատինական տառադարձությամբ, մնում են անորոշ, չին ու մանրամասն քարտեզների օգնությամբ հնարավոր կլինի որոշել նաև սրանց տեղերը։

տան (իմա՝ Ամերիկա) կոչվող երկրից ամեն տարի ուղարկվող 5 նավ լիքը արծաթի ու ոսկու մասին իր լսած առասպելական պատմություններին։ Ուշագրավ է 14 առաջատանոց հսկա նավերի նկարագրությունը, որով նոր Հունդուստանից Սևիլիա էին հասնում 6 ամիս տևող նավարկությամբ։

Այնուհետև բազմաթիվ նշանավոր քաղաքներ ու սրբավայրեր է այցելում մեր ուստավորը՝ Անդալուզիայի և Գրանադայի շրջաններում։ Նրկարաբան չլինելու մտահոգությամբ ստորև թվարկում ենք միայն նրա այցելած բնակավայրերը, հայերենի կողքին նշելով նրանց ճշգրտված անվանումները։

Սևիլիայից հետո այցելած բնակավայրերն են. Կարմունայ (Carmuna) — Մարչինայ (Marchena) — Օսունայ (Osuna) — Էսիլայ (Ecija) — Գորտովայ (Cordoba) — Հրճիտոն (Archidona) — Անթեքել (Antequera) — Լոյ (Loja) — Պլիլո (Campillos) — Մալակայ (Malaga) — Ալհամայ (Alhama) — Սանթաֆե (Santafe) — Ակրանատ (Cranada) — Ճալեն (Jaen) — Ալխալայ (Alcala la Real)։ Այնուհետև, անցնում է ուրիշ 10 քաղաքներ ու հասնում մի մեծ վանք, որին «Նոստրը Սինոր Վատալուպ» է անվանում։

Այս, անտարակույս, Գվադալուպայի (Guatalupe) Տիրամոր հռչակավոր վանքն է, որ XII դարի վերջերից սկսած դարձել էր նշանավոր ուխտավայր։ Նոստրը Սինոր-ը Nuestra Señora (Քրանս. Notre Dame) բառերի աղճատ զրեւածն է, նշանակում է՝ Մեր տիրուհի, այսինքն Աստվածամայր։

Այստեղից ուղևորվում է Մադրիդ, անցնելով հետևյալ վայրերով՝ Տալավեր (Talavera) — Թուլիթ (Toledo) — Նոստրը Սինոր Կարիդայ (Nuestra Senora de Carita)²²։

Մադրիդ (գրում է Մատրիլ) քաղաքից, Փիլիպպոս II թագավորին (1555—1598) տեսնելու բաղձանքով, Սարգիս արքան մեկնում է Ուսկուրեալ (Escorial)՝ թագավորի ամառային աթոռանիստը (սամառն հոն կերթայ, ձմեռն Մատրիլ կու նստի), որ հայտնի էր վանական նորակառույց շինություններով։ Թագավորից «ողորմություն» (նպաստ) և «թուղթ» (օգնություն ցույց տալու հանձնարարական գրություն) ստանալով, մեր ճանապարհորդը շարունակում է իր ուղևորությունը. անցնում է Ալխալայ (Alcala de Henares), Վադալալայ (Guadalajara), Սարայկոս (Saragossa), Լերիդայ (Lerida) քաղաքներով և հասնում Պարսալոն (Barselona)։ Հայտնում է, որ 50 հազար տուն ունեցող այդ քաղաքի բնակչության կեսը զոհ է դնացել տարափոխիկ ինչ-որ հիվանդության։

Բարսելոնից անցնում է Թոռթոն (հավանաբար Tortosa նավահանգստային քաղաքը), ապա 3 այլ քաղաքներից հետո՝ Վալենսայ (Valencia)։

Սարգիսն այստեղ վերհիշում է Մարտիրոս եպիսկոպոսի «Ուղեգրության» այն դրվագը, ուր գրանցված են հետաքրքրական տողեր հետևյալ քայլերով իր ուժասպառ լինելու, իրեն մի նավի վրա տեղ տալու խնդրանքի, նավավարի «համատարած ծով»-ով ծրագրած հեռագնաց ճանապարհորդության և հարակից հարցերի մասին²³. կրկնելով իր նախորդից փոխ առած որոշ բառեր ու արտահայտություններ, մեր արքան գրում է. «զնացի, իրիցներուն աղաչեցի։ Այլ չիմ կարնալ քալել, մարմնու կարիքս հատաւ, որ Դ (4) տարի է կու քալիմ. ինձի նաւ մի գտէք»։ Նավավարը հայտնում է, որ «ես անատակ ծովն կու երթամ», շնայած խոսքը Միջերկրական ծովի մասին է (պարզ նկատվում է Մարտիրոսի «Ուղեգրության» ազդեցությունը)։

Ի վերջո, մեր ուխտավորը նստում է նավ ու շարունակում իր ճանապարհորդությունը։ Լինում է Բալեարյան Էվիսայ (Yvica), Մաճուռկայ (Mallorca) և Մինորդայ (Minorca) կղզիներում, ապա, 2 ամիս հավելուց հետո, կրկին ոտք է դնում իտալական հողի վրա. «հասայ մեծ քաղաքն ճենեւայ» (Genova),— գրում է նա։ Յոթ այլ քաղաքներ անցնելով,

²² Կամ Notre Dame de Corita. 1169 թ. Կալատրավա միաբանության ասպետներն օգնեցին Ֆերդինանդ II թագավորին զրավելու արաբներից Կորիտա ամրոցը, որը 5 տարի անց դարձավ այդ միաբանության տիրույթ. այստեղ կառուցվեց Աստվածամոր անունով նշանավոր վանք։

Գվադալուպայի և Կորիտայի Տիրամոր վանքերի մասին տես՝ Encyclopédie theologique ou série de dictionnaires sur toutes les parties de la science religieuse, publiée par l'abbé Migne, 50 volumes, Vol. 20, 21, Paris, 1847.

²³ Ոմանք ենթադրել են, որ Մ. Նրկեկացին, տեղ ստանալով վերոհիշյալ նավում, մասնակցել է Կոլումբոսի 2-րդ ճանապարհորդությանը դեպի Ամերիկա։ «Ուղեգրության» մեջ գրանցված տվյալները բնավ հիմք չեն տալիս նման ենթադրության։ Անպատասխանատու և աղմկարար հոգեվաժները, որ զրվեցին վերջերս այդ մասին, գիտության հետ առնչություն չունեն։

հասնում է Բավիայ (Pavia), Միլան (Milano), ապա Պոլոնիայ (Pologna), Ֆլորենցիայ (Florenza), Սիեն (Siena)։ Սիենայից հետո հիշատակվում են Աբովա (արդյո՞ք Acquapendente), Թենթիր, Սանկիրիկոյ (St. Quirico), Մոդանթիֆիաշկ (Montefiascone) և Վիտերբո (Viterbo) քաղաքները։ Ուրիշ 10 բնակավայր անցնելով (որոնց անունները չեն տրվում), Սարգիս արեղան հասնում է Անապոլի (Napoli), այնուհետև հիշատակվում են Պոլիա (Paola) քաղաքը՝ Իտալիայի հարավում, և Մոնինու կղզի ու լար կոչվող ինչ-որ բնակավայրեր։ Հաջորդ՝ Ֆարֆարին տեղանվան տակ հակված ենք տեսնելու Սիցիլիան Իտալիայից բաժանող Faro նեղուցն ու համանուն հրվանդանը՝ Մեսսինայից հյուսիս։ Սրան հաջորդում է Ճիլճիլիան, որ անշուշտ Սիցիլիա կղզին է, և Սարայկոսա տառադարձված մի տեղանուն, որն ըստ երևույթին առաջացել է Սարգինիա և Կորսիկա կղզիների անվանց աղճատ ու անբնական կցումից։ Տեղանունների նորահնար այս համաձուլումը թյուրիմացաբար կատարել է կամ ինքը՝ Սարգիս արեղան, կամ էլ նրա «Ուղեգրության» խմբագիր-ընդօրինակողը։

Սարայկոսա կոչված վայրից հետո, «բազում քաղաքաւ» անցնելով, մեր ճանապարհորդը մեկ էլ հայտնվում է Իտալիայի հյուսիսում գտնվող Կրեմոնա (Cremona) քաղաքում, ապա անցնում Սվրոնայ (Verona), Աիցենց (Vicenza), Պատվայ (Padua)։ Ես մի թո՛ղք «բազում քաղաքաւ» և նրան գտնում ենք Ադրիատիկի ափին՝ Մատունա Լոռեդ (St. Maria Laurentana) սրբավայրում՝ Լորետո քաղաքի մոտ, ապա Անքունիայում (Ancona), որտեղից նավով, երկրորդ անգամ լինելով, հասնում է Վենետիկ։

«Ուղեգրությունն» այստեղ թերություն ունի, առնվազն 6 տող պակաս է (չի ընդօրինակված ու դատարկ տեղ է թողնված)։ Հաջորդ էջի շարունակության մեջ հիշատակվում են Կ. Պոլսի մոտակայքում գտնվող Զոռլու (Corlu), Սիլիվի (Silivri) և Զաքմայճայ (հավանաբար՝ Բոյուկ Զեքմեշէ) բնակավայրերը։ Սրանցից վերջին երկուսը ծովափնյա են, իսկ Զոռլուն գտնվում է Թեբիրդաղից շուրջ 60 կմ հյուսիս-արևելք՝ ծովից հեռու։ Ուստի պետք է հետևենք, որ Սարգիս արեղան Վենետիկից Ստամբուլ ճանապարհի գեթ վերջին հատվածը կտրել է ոտքով։

Զեքմեշեից հետո մեր ուղեգիրը մտիւ է Ստամբուլ, հայտնելով, որ այդ տեղի է ունեցել հայոց Ռիս, այսինքն 1591 թվականին։

Եվրոպական երկրներում կատարած իր դեգերումների առաջին ու հիմնական շրջանն ավարտելով, Սարգիս արեղան մի կարևոր նախադասությամբ ամփոփում է իր ճամփորդության արդյունքները, հաշիվ ներկայացնում, թե քանի բերդ ու քաղաք, եկեղեցի ու վանք է տեսել իր շրջած երկրներում։

«Ո՛վ ընթերցող բանիս՝ հարք և ևղբարք, — գրում է նա, — թէ կասէք մեղաւոր Սարգիսն Ֆռանգըստան կամ ինչ դատար քաղաք է տեսնու։ Ռ (1000) բերթ ու քաղաք տեսնու եմ, թո՛ղ զդեղրանքն, ԴՌ (4000) հանդիսի եկեղեցի տեսնու եմ, ԳՌ (3000) վանք արեղի, ԸՌ (8000) կուսանաց վանք»։

Ճանապարհորդության երկրորդ շրջանն սկսվում է Կոստանդնուպոլսից նույն 1591 թ.։ Այդ մասին գրում է ընդամենը մեկ էջ, որից հստակորեն պարզվում է նրա նոր երթուղին. Ստամբուլ — Ատրանա (Edirne) — Բրաւատա (Bra) — Պապա (Papa) — նավով անցնում է Տունա (Դունայ) գետը և մտնում Պուլտանաց երկիր (այսինքն՝ Մոլդովա), հասնում թագավորանիստ Եաշ (Yassy) հայաշատ քաղաքը, ապա Ռումանի (Roman) — Սաշով (Suczava) — Պոշան (Botuschani) — Սերաթ (Sereth) — Խոթին (Chotin)։ Անցնելով Դենեստր գետը, մտնում է Իլախաց աշխարհ (Լեհաստան), լինում միայն Կամենեց-Պոլուսկ նշանավոր հայաքաղաքում։ Կրկին վերադառնում է Եաշ, մեկնում Աղքերման (Akkerman), նստում նավ և, մեկ ամիս ծովային ճամփորդությունից հետո, ինչպես ինքն է ասում, «հասա Հայաստան»։ Ասել ենք արդեն մեր կարծիքն այն մասին, որ Սարգիս արեղան ավի է իջել, հավանաբար, Տրապիզոնում, ապա անցել Երզնկայի մոտ գտնվող սուրբ Կիրակոսի վանքը։ Ինչպես վերն աշխատեցինք ցույց տալ՝ մեր ճանապարհորդն, ըստ երևույթին, այդ վանքի միաբաններից է եղել։

Իր «Ուղեգրության» ամենավերջում Սարգիս արեղան գրանցել է միջնադարյան մի գողտրիկ հայրեն օտար աշխարհ ընկած դարիպի ծանր հոգեկան վիճակի մասին։ Հայրենի երկրի կարոտը ձգում է մարդուն նույնիսկ այն ժամանակ, երբ այնտեղ ծարավ է ու աւնոթի, իսկ օտար հորիզոններում տեր է դարձել հաղար բարիքի։

Ի՛նչ անեմ ես հաղար բարին,

Որ կու գա ձայնս դարիպի,

Բողում, իմ աշխարհն երթամ,

Բող կենամ ծարաւ, անօթի։

Այս քառյակով էլ ավարտվում է Սարգիս արեղայի «Ուղեգրությունը»։

* * *

Ինչպես ասել ենք արդեն, Սարգիս արեղայի «Ուղեգրությունը» պահպանվել է միակ ընդօրինակությամբ՝ Մաշտոցի անվան մատենադարանի № 9832 թանկարժեք ձեռագրի մեջ: Գիտենք նաև, որ այս ընդօրինակությունը, մանավանդ իր սկզբնական մասերում, հետագայում ընդարձակվել է ներընկալելով խոշոր հատվածներ Մարտիրոս Երզնկացու «Ուղեգրությունից»: Լավելացնենք այստեղ և այն, որ № 9832 ձեռագրի «Ուղեգրությունը» պարունակող թերթերի ընդօրինակությանը մասնակցել են 2 տարբեր գրիչներ: Առաջինը գեղեցիկ, կանոնավոր նոտրգրով ու սև թանաքով ընդօրինակել է բնագրի պահպանված մասի 1ա—2ր և 17ա—18բ էջերը, իսկ երկրորդը՝ մեծագույն մասը՝ էջ 3ա—16բ. սրա ձեռագիրը նույնպես նոտրգրի է, սակայն տալիս, օգտագործված թանաքը բաց շագանակագույն է: Այս երկուսն էլ իրենց գրագիտությամբ չեն փայլել և բազմաթիվ վրիպակներով ու սխալագրությամբ աղճատել են բնագրի առանձին նախադասություններ, իսկ ոմն սրբագրող փորձել է որոշ ճշգրտումներ կատարել լուսանցքներում ու տողամեջերում: Վերոնշյալ հանգամանքների թվադրությամբ բնագիրը շտկում ենք՝ հաշվի առնելով ձեռագրի սրբագրողի նշումներն ու ընդօրինակողների ուղղագրական ըմբռնումները: Մարտիրոս Երզնկացուց քաղված հատվածները ներկայացրել ենք արամյան կոչվող տառատեսակով՝ Սարգսի բուն շարադրանքը ակնառու ներկայացնելու մտահոգությամբ:

Տողատակում, ըստ այդմ, նշել ենք ձեռագրի առանձնահատկությունները, սրբագրողի շրտկումները, ինչպես նաև Մարտիրոս Երզնկացու «Ուղեգրության» զույգ ձեռագրերի տարբերությունները (անշուշտ այն հատվածներում, որոնք քաղված են Մ. Երզնկացուց):

Օգտագործել ենք հետևյալ համառոտագրությունները.

Ձ.—Ձեռագիր № 9832:

Սրբ.—Սրբագրող № 9832 ձեռագրի Սարգիս արեղայի «Ուղեգրության» հատվածի:

Բզմ.—Մարտիրոս Լպիսկոպոսի Երզնկացույ Ուղեգրութիւն ի Սուանիա («Բազմավէպ», 1937, № 2—5, էջ 49—60):

Տղկ.—Վ. Հակոբյան, Մարտիրոս Երզնկացու ճանապարհորդական նոթերը (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1957, № 6, էջ 97—110):

Բնագրին կցված է Սարգիս արեղայի ճանապարհորդությունների երթուղին ցույց տվող քարտեզ, իսկ ներածական մեր խոսքի 11-րդ ծանոթագրության մեջ տրված է օտար բառերի այբբենական բառացանկը համառոտ բացատրություններով:

ՀՍՍՀ ԳԱ քղբակից-անդամ Լ. Ս. ԽԱՉԻԿՅԱՆ

ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԳԻՍ ԱՔԵՂԱՅԻ

. 1

5 ||(էջ 1 ա)||Թուիս կասեն: Վանք մի կա Կ (60) հալիեղայ կայ ի մէջն, Թ (9) գումպէթ է, խիստ մեծ վանք է. սուրբ Նիկողիոս հայրապետի մարմինն մէջն է, արծաթէ նաշով է դրված. ինչ ցաւադար որ դա, կու բժշկէ՝ կաղ, կուր, անդամալուծ, հայ ու թուրք ու հ[ե]ռոմ՝ ՀԲ (72) միլաթ ղինչ խնդիրք որ ուզէ՝ կուտա, նման սուրբ Կարապետի: Բ սուրբ մարմինն երկրպագոցի, և մեղաց թողութիւն խնդրեցի մեզ և մեր ծնողացն և մեր երախտաւորացն:

10 Անկէց ելայ գնացի խապալայ², որ նաւահանգիստ է: Ըստամպալէն մինչև ի հոն ԾԶ (56) արն հասաք, Զ (6) օր տեղն մնացինք. մտայ Ֆրանկի նա|| (1 բ)|| և մի և գնացի առջի քաղաքն Ֆռա[ն]կաց՝ Զատրայ քաղաքն, Ուրուլին, Փռանսայ, Փափասար, Տմաղու. երեսուն օրն նախն մէջն կեցա, հասա ի նաղարաթ³: Լ (30) օր նաղարաթ կեցա, անկից ելա, մտա ի Վանատիք:

15 Մեծ* և փառաւոր քաղաք է և ինք ի մէջ ծովուն շինած. ՃԲ (100.000) խանայ է, ասին: Ա (1) եկեղեցի մի կայ, ի մէջն խիստ զարդարած է ոսկով, սուրբ Մարկոս անտարանչի եկեղեցին է. և Բ (2) մեծ երգեհոն կա ի մէջն, և Ա (1) քեւտուր ոսկի առիւծ է շինած ի մէջն, ԲՃ (200) սրբոց մաս կա ի մէջն: Եւ այլ շատ եկեղեցիք կա|| (2ա)|| ի քաղաքն և շատ վանորաք կա ի բոլոր քաղաքիւն. ամենն ի մէջ ծովուն է շինած: Եւ մեծ մոյտան մի կա առջև եկեղեցուն սուրբ Մարկոսի, և ի վերայ դրանն Դ (4) դեղին պղնձէ ձի է շինած մեծ, Ա-Ա (մկ-մէկ) ոտվին ի վեր է կալել: Եւ ի հա-
20 րափային կողմն՝ ծովուն դիմն Բ (2) մեծ սուն է կանգնեցուցած. Ա (1)-ին վերա քեւտուր առիւծ մի կա և մէկալին վերա սուրբ Գէորգն է կանգնել. Եւ քաղաւորին դարպասն ամէն ոսկով զարդարած: Ով կարէ պատմել
25 զքաղաքին զաղեկութիւն: Եւ ԺԴԲ (14.000) կարմունճ կա ի մէջն, և կեցաք ի հոն Բ (2) ամիս:

Ելա մտա ի նաւն, գնացի հասայ|| (2 բ)|| Պատվայ, Ռընանուլուին. Աֆռառ, Քամէնց, Տրմաղօ, այլ ԺԵ (15) քաղաք այլ անցա, Բ (2) ամիսն հասա|| (Հոռոմ): Իայց լեզու ոչ էի գիտել, խիստ շարշարեցա մինչև սորվեցա,
30 ապա հասա աստուածայալան մեծ քաղաքն Հոռոմ ուր և սուրբ փառաւորեալ.

* Արամյան տառատեսակով ներկայացվում են Մ. Երզնկացու «Ուղեգրությունից» ներմուծված հատվածները:

3 Ձ. ցաւարար 3 Ձ. կա լիս կու 7 Ձ. երբխտաւորացն: Այս բառը ձեւագրում գրված է տարածեւ աղավաղումներով: Բնագրում տալիս ենք ուղիւ ձեր՝ տողատակում հասարակական նշում կատարելով 15 Ձ. Լկեղեցին: Նաու հաճախ այս բառը որոշյալ հոգով (եկեղեցին) ր գրվում ուղղական հոլովածի ղեւքում: Ուղղում ենք՝ աղղատակում համապատասխան նշում կատարելով 16 Ձ. Երբեռն. ուղղում ենք Երգեհոն, հաշվի առնելով Մ. Երզնկացու բնագիրը 19 Ձ. մոտտան. ուղղում ենք քստ իմաստի մոյտան հրապարակ 22 Ձ. և Բ. մեծ տուն մէ կանկեցուցած, ուղղում ենք քստ Բզմ. Տղկ.-ի:

ամենագովելի սուրբ մարմինն են գլխաւոր առաքելոցն սուրբ Պետրոսի և Պողոսի: Մարմինն երկրպագեցի և մեղաց թողութիւն խնդրեցի մեզ և մեր ծնողաց և մեր երախտաւորացն: *Եւ կացի անդ Բ (2) ամիս*, և զամէն տնօրինական տեղիքն տեսա:

- 5 Սուրբ Պետրոսի դուռն արեւելք է, և (5) բարձր և անեղ դուռ ունի և միջի դուռն քաւիցու է, *ամէնն պատկերք է, խիստ դարձ (3 ա)՝ մանաւի բաներ կայ*. և մէկ փեղկն սուրբ Պողոս է կանկնել և Ա (1) սուրբ Պետրոս: Յարեւելից դիմն՝ ներուն քաղաւորին դարպասին դիմացն՝ Պետրոսի խաչելութեան տեղն է: Ի մէջ քաղաքին իւրեանց զնտանին տեղն է: *Եւ ի Հոռմայ ի դուռ*.
 10 հետո Գ (3) մղունաւ, Պողոսու գլխատման տեղիքն է. և հարաքու դիմն, որ կայ ի մօտ քաղաքին, այն տեղ է, որ Քրիստոս հանդիպեցաւ սուրբ Պետրոսի: Եւ քաղաքին եզերն Սան ձիվան եկեղեցին է, որ սուրբ Յովաննոյ գլուխն ի հոռն է՝ ամպողջ մարմնով: Եւ ի քաղաքին մէջն հարաքու դիմն Գրիգոր Ակոականդացուն *|| (3 բ) ||* զնտանն է, հիմայ եկեղեցի է շինած: Եւ այլ առաջ՝ մէջ քաղաքին Սանքիլինայ կայ, այն եկեղեցին ձ (100) սրբոց նշխարք կայ և այլ շատ բազում փառաւորութիւն կայ. ի մէջ քաղաքին ՌէճճԴ (1774) եկեղեցի կայ՝ ի Հոռմ, Բ (8000) սրբոց գերեզման կայ ի քաղաքն և ի դուռն: Եւ ամէն օր Ի (20) — Լ (30) եկեղեցի շուրջ կու գայի, մեծ և փառաւոր եկեղեցիք կայ, և ամէն օր գլխաւոր առաքելոցն գերեզման կերբայի և ինծ մեղաց թողութիւն խնդրէի: Ով կարէ պատմել զփառաւորութիւն սուրբ եկեղեցացն և քաղաքին:

Եւ եկին զիս փափին մօտն տարան, հետս գրուցեց, հարցաւ *|| (4 ա) ||* և թուղք երես, որ ամէնն կու զարմանային, որ կու տանէր մօտն, կու գրուցէր հետս⁴:

- 25 *Անկից ետեւ ելանք զնացաք, ժե (15) քաղաք անցայ*, հասայ Տուտէշ⁵ ազգին աշխարհն, որ կասին Ալաման: Այն աշխարհն ալ լեզու չէի գիտել, չարչարեցաք՝ մինչև սորվեցաք: Եւ զնացի, ժ (10) քաղաք անցայ, հասայ ի մեծն Կաստէնցիայ, և այլ Ի (20) քաղաք ալ անցայ Բոնին գետովն. որ լանքն Ա (1) դիհն մէկ ալ դիհն չի հրեալ՝ անշափ մեծ է, զնացի ի մեծ
 30 քաղաքն *|| Պազլ ||*, որ զիս բռնեցին, թէ չաշուտ էս, ասին. *հանց շատ հարցան ու քննեցին, և աստուած աղատեց*⁶:

Եւ այլ բազում քաղաքաւ ալ անցայ, հասա ի *|| քաղաքն, որ ||* Ֆոռուտ⁷ կու ասեն, որ շատ հիանալի բաներ *|| տեսայ || (4 բ)* Եւ անտի ժ (10) քաղաք ալ անցայ, հասայ ի Ֆրիփուլս, որ ասին, թէ այս քաղաքն Գ (3000) ազգի կայ, մեծ եկեղեցուն մէջն ԲՃ (200) սրբոց մաս կայ: Եւ զմեզ մեծ հարկով հարկեցին: Ի (20) օր կացինք, ուխտ արինք, ելանք զնացինք

8 Ձ. «յարեւելից դիհն»-ի փխ Մ. երզնկացիին ունի՝ ևւ ի Հոռմայ յարեմալից դեհն, 2. թարգմանին 12—13 Սրբ. որ սուրբ Յովաննոյ գլուխն փխ 2. որ երկուսին գլուխն 13 Սրբ. մարմնով փխ 2. մարմին 14 Ձ. ախարկականդացուն 14 Ձ. եկեղեցին է 2. չիք շինած (ավելացրել է սրբազրոյր) 15 Ձ. եկեղեցին 17 Ձ. եկեղեցին 17 Ձ. սրբոց 18 Ձ. եկեղեցին 19 Ձ. գլխայոր 20 Ձ. Օվ կարէ 21 Ձ. քաղաքին 22 Ձ. հետս գրուցեց, հարցաւ բառերն ավելացված են սրբազրոյի ձեռագրով 25 Սրբ. ելայ զնացի 28 Ձ. Բոգին գետովն ուղղում ենք Բոնին (իմա Հոռմոս) բառ Մ. երզնկացու 30 Ձ. Պազլ (Բագել) քաղաքի անունը բացակայում է. լրացնում ենք Մ. երզնկացուց 32 Ձ. քաղաքաւ Ի (20) ալ անցայ 34 Բճ. Ֆրիփուլս, Տգկ. Ֆրիփուլս, անտարակույս Բագելի ֆրեյբուրգ քաղաքն է 35—36 Ձ. զմեզ մեծ հարկով հարկեցին զմեզ 36 Սրբ. արի ելայ զնացի

- Ստրագրուի: Եւ անտից Ի (20) քաղաք ալ անցայ, հասայ ի Կապլայ, որ խիստ հարկեցին զմեզ: Եւ անտից ԺԵ (15) քաղաք ալ անցայ, հասայ ի մեծայհամբաւ ֆաղաֆն ի Կալունիայ, որ ասեն, թէ Բ հարուր Ռ ու ԻԴՌ (224.000) տուն է. խիստ մեծ և զարմանալի ֆաղաֆ է: Եւ անդ(5ա)ժԲ (12) հագար սրբոց նշխարք կայ, ամենուն զլուխն մեծ եկեղեցուն մէջն է շարած, և ամէն մարդ կու աեսնու և մարմինն ի գերեզմանաց: Եւ եկեղեցի մի այլ կայ՝ խիստ գեղեցիկ է, ԻԴ (24) կուսանաց մարմինք կայ արծաթէ սնտրկով դրած: Այն քաղաքին մէջն ԵՃ (500) եկեղեցի կայ, զԱստուածածնին պատկերքըն հուն է՝ մեծ եկեղեցուն մէջն Դ (3) դուռն ունի
- 10 թուճէ շինած և ըստ իւր սուրբ արժանեացն զարդարած. Աստուածածինն իւր գիրկն է դրած զտէրն մեր Յիսուս Քրիստոս, և Ա (1) քան մն դրած ի զլուխն ան(5բ)ժԳին գոհար ակներով և մարգարտով զգունգգուն [զու]գած էր, որ գին չի կար: Հարցայ եկեղեցոյն իրիցուն, թէ ինչ խառար գնոչ լինի այս. նոքա ասին, թէ ԲՃՌ և ԺԵՌ (215.000) ոսկի խարհ է եղել: Եւ ի սիրտն սուրբ Աստուածածինն մարգարտէ խնձոր մի կապած էր, քան ի բրով ունկուզ մի էր, և բոլորն ԺԲ (12) հատ մարգարիտ կար, ամէն հատ քան ի փոքր կղբոր մի էր, և մէջն ընդ մէջ Դ (4) ակն՝ Բ (2) լալ. Բ (2) եաղուր, ամէն մէկ քան ի մեծ կղտոր մի է: Եւ ավաֆ խորանին բոլորն ԺԶ (16) գերեզման կայ, դեղին պղինձ(6ա)ժէ ֆաշած՝ ի վերայ ոսկով
- 20 զարդարած, վարագուրն ի վեր ֆաշած: Եկեղեցին ԵՃ (500) կամարի վերայ է, դուռն ունի բարձր և ահեղ. զինչ որ աշխարհս քան կայ, զամէնն ի դուրս դիմն է հանած, ոսկով զարդարած. ԴՃԿԵ (365) լուսայմուտ ունէր, որ երկանքն Դ (3) զիրկ էր, և եկեղեցուն լուսայմուտն գոյնգգունոց ճամով զարդարած էր: Եւ զանկակայպուտն մի կար, քան ի բերք մի մեծ էր, և ահեղ զանկակ մի կար կախ, որ ԻԸ (28) հոգի կու ֆաշեր: Եւ այլ զարմանալի բաներ շատ կար(6բ)ժշատ եկեղեցիք, շատ վանօրաք կար. հարցայ, թէ քանի եկեղեցի կայ, ասին թէ ԴՃԷ (407) եկեղեցի է, և (40) վանք է. ուխտ արի, մեղաց թողութիւն խնդրեցի:
- 30 Եւ ասպա ելայ, զնացի, ԺԵ (15) քաղաք ալ անցայ, հասայ ի մեծ ֆաղաֆն Սանքա-Սարիայ տ՝Ա.Բ.ս, ուր կասեն քաղաւորաց գերեզմանալտուն է ալտման ազգին, ամենաւրհնեալ և փառաւորեալ շապիֆն ի հոն է սուրբ Աստուածածինն. և անդ շատ ջերմանչուր կայ: Եւ եկեղեցին, որ ամենաւրհնեալ շապիֆն է, ամէնն ոսկով է զարդարած. և Դ (4) դեղին պղինձէ սին է(7ա)ժկանկեցուցած և օսկած, և մեծայմեծ սան զլսրներն ոսկով
- 35 զուգած, և մեծ ոսկէգօծ սնտուկ մն շինած, և սուրբ Աստուածամօր սուրբ շապիֆն ի ներսըն է դրած: Եւ կեցաք անդ ամիս մի, մինչև բացին. որ ար-

1 Ձ. Տրապուիս, Բզմ. Ստրագրուիս, Տղկ. Ստրագրուիս, Բզմ. Կապլ. Տղկ. Կապլեր (իմա Կարենց) 3 Ձ. Կալայ. նիշտ են Բզմ. Կալունիայ և Տղկ. Կալունիայ, որ Colonia(Քոլոն) քաղաքն է 4 Ձ. տուն է ասին 6 Ձ. եկեղեցին 7 Ձ. դեղեցիք 8 Ձ. սնտրկով, 2. Եկեղեցին 10-11 Ձ. աստուածածինն զիրկն է դրած և տէրն մեր Յիսուս Քրիստոս (աղետոված է) 11 Ձ. Սրբ. մի փխ. մն 12 Ձ. ակներով և մարգարտով 13 Ձ. քար փխ կար 14 Ձ. ոսկի է 16 Ձ. բրով 19 Բզմ. գերեզման փխ վարակուր 20 Ձ. եկեղեցին 2. վերայ է (7) փխ վերայ է 22 Ձ. հանաց ոսկով զարդարած 23 Բզմ. ճամով, Տղկ. ճամով, 2. ճարպով 26 Ձ. Եկեղեցին 27 Ձ. Եկեղեցին 29 Ձ. ասպայ 32 Ձ. Եկեղեցին 33 Ձ. ոսկով 34 Ձ. սոյն փխ սին, 2. օսկուծ, 2. ոսկով 35 Տղկ. ոսկէգօծ, 2. ոսկէգոյն, Սրբ. ոսկէգոյն 36 Սրբ. կեցայ

ժանի եղա՛մ տեսանելոյ, և մեղաց քողութիւն խնդրեցա՛մ մեզ և մեր ծնո-
ղացն և մեր երախտաւորացն, խիստ մեծարեցին:

5 Եւ անտի ելա՛մ գնացա՛մ, Ժէ (17) քաղաք ալ անցաք, հասա՛մ մեծ քա-
ղաքն Յունվէս, որ քաղաւորայնիստ է Ալաման ազգին, և կեցա՛մ անդ Դ (4)
շաբաթ մի: Եւ անդ է ամէնայգօր սուրբ քաղաւորին տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի|| (7բ)|| սուրբ փոյրան, յորժամ խաչելութեանն կապեցին. Քրիս-
տոսի աստուածրնկալ արեամբն ներկեալ է: Եւ արժանացա՛մ սուրբ տեսոյն
նորա, և մեղաց քողութիւն խնդրեցա՛մ մեզ և մեր ծնողացն և մեր երախ-
տաւորացն:

10 Եւ անտի ելալ, Ի (20) քաղաք ալ անցալ, հասա աշխարհն Ֆլանտրու.
լեզու չէի գիտել, խիստ շարշարանք քաշեցի մինչև սորվեցալ: Հասալ մեծ
քաղաքն Առոմէ. ՃՁԹ (180.000) տուն է, ասին, ԵՃ (500) եկեղեցի կալ ի
մէջն: Կեցաք ամիս մի, ելա՛մ, գնացա՛մ, ԺԸ (18) քաղաք ալ անցալ, հասալ
աշխարհն Ընկլուզաց, որ կու ասեն Լուդրան է. ի հոն|| (8ա)|| ալ լեզու չէի
15 գիտել, խիստ շարշարանք քաշեցի, մինչօր սորվեցալ: Նոքա ձկնակերբ են.
զինչ մեծ անեղ ձուկն կալ, այն ծովն է: Եւ անտի դարձեալ արևմուտս ձկան
կող մի տեսալ, ԺԴ (14) թիղ էր:

Գնացի, ԻԵ (25) քաղաք ալ անցալ, հասալ աշխարհն Ֆռանցու, ի քա-
ղաքն որ կոչի Սանդիայ⁸ ի հոն ալ լեզու չէի գիտել, խիստ շարշարեցալ
20 մինչև սորվեցալ:

Հասալ ի քաղաքն Աթուռ, որ եպիսկոպոսաց, քաղաւորաց և քագու-
հուց գերեզմանայտուն է, խիստ գեղեցիկ քաղաք է, ԵՃ (500) եկեղեցի
կալ, և ավա՛մ եկեղեցին, ուր քաղաւորաց|| (8բ)|| գերեզմանայտունն է, ե-
կեղեցոյ ձախ դիմն Դ (4) ձկան կող էր դրած, Ա (1) կողն ԺԵ (15) թիղ էր,
25 և ասին քէ այս ծովս այլ մեծ ձուկն կալ⁹:

Եւ ելալ, գնացի հասալ մեծ քաղաքն Այդուտ, ուր ասին քէ ՃԹ
(100.000) տուն է, ԶՃ (600) եկեղեցի կալ, մեծ եկեղեցին ԲՃ (200) սրբոց
մաս կալ: Ուխտ արի, ելալ, գնացի հասալ Լեվոն, Մարսելիէ: Այլ ԺԵ (15)
քաղաք անցալ, [հասալ] մեծ քաղաքն, որ կասեն Բարիդ: Խիստ մեծ քա-
30 ղաք է, Ա (1) մեծ եկեղեցի մն կալ ի մէջն, ԺԲ (12) դռնն է. ՃԹ (100.000)
մարդ մտնու՝ չի լցվել. և Դ (3) մեծ դուռն արևմտած դիմն է, և ի մեծ
դուռն Բ (2) բղ|| (9ա)|| կէն է. դուռն վերայ Քրիստոս է կանկնել և վերայ
դռանն Քրիստոս դատաստան է նստել ոսկի արոտով, և ամէնն ոսկով է
զարդարած: Եւ հրեշտակապետք, սերօքէք և քերորէք աչ և ի ձախ կանկնել
35 են, և աչ դիմի հրեշտակն բռնել է գայն սին, որ Քրիստոս գանեցին, և
զգեղարդն, որ զՔրիստոսի կողն խոցեցին. և ձախ դիմն հրեշտակն կալն՝-

1 Սրբ. Եղայ, Սրբ. խնդրեցի 2 Ձ. էրէխտայորացն 3 Սրբ. Ելալ գնացի... անցալ,
հասալ 4 Ձ. Ուլնես փխ Յունվէս, իմա Անվերս (Ֆրանս. Anvers Ֆլամդր. Antwerpen),
Սրբ. կեցալ 4—5 Ձ. անդ Դ (4) շաբաթ մի աղավաղված է. կամ պետք է լինի «անդ շաբաթ
մի», կամ՝ «անդ Դ (4) շաբաթ» 5 Ձ. անտ փխ անդ, 6 Ձ. Քրիստոսի ամենայգօր 7 Սրբ.
արժանացալ 8 Սրբ. խնդրեցի 9 Ձ. էրդտուորացն 12 Ձ. եղկեցին 13 Սրբ. կեցալ... Ելալ,
գնացալ 15 Ձ. սորվեցաք 21 Ձ. խախտապոսաց 22 Ձ. խիստ զերեղմանայտուն է,
2. դեղեցիք, 2. եղեկեցի 24 Ձ. ցախ թիհն 25 Ձ. այլ մեծ ծով այլ կալ, այլ մեծն ձուկն
կալ (Սրբագրողը ջնջել է ծով այլ կալ բառերը) 27 Ձ. եղկեցի, Սրբ. Եկեղեցի փխ եկե-
ղեցի 30 Ձ. Սրբ. մի փխ. մն 31 Ձ. մեծն, Սրբ. մեծ 33 Ձ. արթուով, ոսկով 34 Ձ. ցախ
կանդնել է 35 Ձ. սոյն փխ սիւնն, 2. դանեցին, Սրբ. գապեցին, Մ. Երդնկ. կապեցին
36 Ձ. ցախ

- կենել է, գիսաչն է բռնել: Եւ աչ դիհն սուրբ Աստուածածինն է չոփել ի վե-
րայ ծնկանց և ձախն՝ սուրբ Յովանէս և սուրբ Ստեփանոս. ւողն [ն]՝ հրեշ-
տակ[ի] և հրեշտակապետն և ամենայն սուրբք: Եւ Ա (1) հրեշտակին ձեռն
կշեռք կայ, որ զմարդուն մեղքն ու վարձքն կու կշիռեն. և (9բ) ձախ դիհն՝
5 քիչ մի վար, սասանէք և դեմ և ամենայն հետ իւր և մեղաւոր մարդիքն
զննիլէին և դժոխքն կու քաշին: Եւ դժոխքն հանած է զարհուրելի դիմօք, որ
մարդ կու տեսնու, կու սասանի: Եւ դէմ Քրիստոսի սուրբ առաքեալքն և
սուրբ մարգարէքն և սուրբ հայրապետն և այլ[ի] ամենայն՝ ազգի ազգի
զունով զարդարած է և ոսկով է շինած զարհայութիւն[ն], որ մարդ կու տես-
10 նու, կու փառաւորի: Եւ այլ ի վեր հանած է ԻԸ (28) քագաւոր, քանն ի
գլխրներն, և կա[ն]կնել ե[ն] մարդու պէս ի կարքն: Եւ այլ ի վեր՝ տիրայ-
մայր Աստուածածինն ոսկով զարդարած է զունգզու (10ա) ճով, որ
կանկ[ն]ել են ի յաչ և ի ձախ սուրբ հրեշտակապետք [ի] սպասաւորութիւն.
Եկեղեցոյն լուսայմութեան մեծութիւն ամէն քան ի կալ մի էր: Եւ եկեղե-
15 ցին ի ձախ դիհն հանած է անտաշ դէմ մի մեծ՝ սուրբ Քրիստայփորն և
Քրիստոս ուսին վերայ, և բազում զարդարանք: Ով մարդ կարէ լեզվով
պատմել զքաղքին աղեկութիւնն: Եւ Բ (2) գետ կու մտնու մէջն և կէսն ի
յուրս չի ելնել: Ասին թէ 200 (600) եկեղեցի կայ, 2 (100) խապտալի և հի-
ւանդի տեղ կայ, 2 (100) աղքատի կայ, 40 (60.000) դպրայտուն կայ,
20 ամէն դպրայտուն Դ(4) վարպետ կայ, 40 (60.000) խասապխանայ կայ:
Հանց մեծ քա (10բ) զաք է, որ ասին թէ 2 տարայ 20 տուն է¹⁰, է (7)
պարիսպ է, քաղքի բոլորն ԽԳ (43) միլ է, մեծ եկեղեցին ԲԾ (200) սրբոց
մաս կայ: Բ (2) ամիս կեցաք: Թագաւորն Լուդրան էր գնացել 40 (60.000)
մարդով, խոստովանհարն սպանեց զթագաւորն թվ. ՌԼԸ (-1589), քաղ-
25 քին դովին փակեցին և ամիս մն չի բացին, մէջն մնացաք մինչև բացին,
շատ շար քաշեցի:
Եւ ելաք, գնացաք հասաք Ռուլիան, Ապիլայ, Անպողայ, Աթուրշը,
Անճէշ, Ասոմէր, Անանդ:
Մտաք ի նաւն, ԳԾ (300) միլ տեղ է, ԻԵ (25) օրն հասաք Ըսպանիայ՝
30 սուրբ Յակոբայ աշխարհն. լեղու չէի գիտել, չարչարանք քաշեցի մինչև
ուսայ: [Հասաք] Աւիլվայ, Սան Պաստիան¹¹, այն մարտիրոսին մարմինն ի
հոն է, որ խա (11ա) չեցին, նետն բռնեցին: Անոր մարմինն երկրպագե-
ցաք մեղաց թողութիւն խնդրեցաք, անկից ելաք, գնացաք հասաք այն
տեղն, որ սուրբ Յակոբ հալն յարուց. հոն ալ ուխտ արինք, ելաք, գնացաք
35 հասաք մեծ քաղաք Պուրղուա, որտեղ որ Քրիստոսի խաչայփայտն է. Սան-
թայ Կ[ր]իստին¹² կասին, այնոր մէջն է: Երկրպագեցաք զայլ պաղի ուխ-

3 Ձ. սուրբ և ամ. փխ ամենայն սուրբք 4 Սրբ. կշիռ է, 4-5 Ձ. ցախ դիհն քիջ
6 Ձ. զնճիլելին 11 Բգմ. և կանգնել են մարդու պէս ի բոլորին, Տգկ. և կանգնել են
մարդու պէս 12 Ձ. ոսկով, 2. զուգզուով 13 Ձ. ցախ 14 Ձ. լուսայմութեան մեծու-
թիւն Ա. քան ի կալ մի էր, Բգմ. լուսամտերն բոլոր ամէն մէկ քան ի կալ մի, Տգկ. եւ
այլ Գ (2) լուսամտի բոլորն ամէն մէկ մէկ քան ի կալ մէկ 15 Ձ. ցախ թին 15 Ձ. դիս-
տայփորն 16 Ձ. օվ 17 Ձ. և զքաղքին, 2. ջի ելել, Սրբ. ջի ենել փխ չի ելնել, 2. եղեկ-
ցին 19 Ձ. դպրաց տուն, Սրբ. դպրայտուն 20 Ձ. խասապխանայ, Սրբ. խասապ
22 Ձ. եկեղեցիներն 24 Ձ. մարդով 25 Ձ. ջի բացին, Սրբ. ջնացի 27 Սրբ. ելայ գնացի
հասայ 29 Սրբ. մտայ, Սրբ. հասայ 32 Սրբ. երկրպագեցի 33 Սրբ. խնդրեցի անկից ելայ
գնացի հասայ 34 Ձ. օր փխ որ, 34-35 Սրբ. ուխտ արի, ելայ գնացի հասայ 36 Սրբ.
կասին փանք մի (է), այնոր մէջն է, Սրբ. երկրպագեցի

տայտեղանք տեսանք. ԳՃ (300) եկեղեցի կայ և Խ (40) վանք կայ, հոգէտուն կայ, թագաւորն է շինել: Կեցաք և ելաք, գնացաք հասաք Վալայտուլի. մեծ քաղաք է, ԳՃ (300) եկեղեցի կայ, ԲՃ (200) սրբոց մարմին կայ. ուխտ|| (11 բ)|| արի, ելայ գնացի Սալամանք. ԺԴՌ (14.000) դպիր կայ, մեծ եկեղեցին Ճ (100) սրբոց մաս կայ: Ելայ գնացի Սամուլայ, Պէնուլենդ, Մէդին էլ Գամբ, Մէդին Ըռուշէք, Սիմանգաս, Դոռդայտէլ, Լէվոն Վիլայֆոնանգ. Ասդորկայ: Մեծ եկեղեցի մի կայ, է (7) դուռն ունի, Մ (50) խորան է, Ճ (100) սրբոց մաս կայ: Ուխտ արի, ելայ գնացի, ԺԵ (15) քաղաք անցայ, հասայ սուրբ [3]ակոբ առաքելի գերեզմանն. ուխտ արի. մարմինն չի կարցի տեսնուլ. ասին, թէ տարին Ա (1) անգամ կու հանին, գնայ, ուխտին ատենն եկոյ:

Ելայ, գնացի, ութ ամիս շուռ եկի, շա|| (12 ա)|| տ քաղաք ու գեղ, վանորաք, ուխտայտեղ, վանք տեսայ, անկից դարձայ ճանփօլ մ'ալ եկի, հասայ սուրբ Յակոբ ըխտին: Հանին զմարմինն դուրս, ուխտ արի: ԴԴ (4000)¹³ էրէց ու հարեղայ կար, թող զաշխարհականն, զկնիկն ու զտղան, զմեծն ու զպզտիկըն՝ անթիւ էր, համբար չէր ի գալ. Գ (3) օր ուխտ արին, շատ սրբոց մասեր կար:

Սուրբ Յակոբայ եկեղեցին Գ (3) տապաղայ է, ԲՃԶ (206) կամար է, Լ (30) խորան է, Դ (4) դուռն է, Ճ (100) էրէց կայ ի մէջն, մեծ զանկակայտուն մի ունի է (7) տապաղայ է, Բ (2) մեծ զանկակ կայ ի մէջն, Լ (30) թիզ էր Ա. զանկակն, մէկ ալ զանկակն|| (12 բ)|| ի (20) թիզ էր¹⁴: Ուխտ արի, ելայ գնացի, բազում քաղաք անցայ, հասայ ի Եզր Աստուածածին¹⁵. արհնեալ է աստուած, որ ողջ ու առողջ ի հոս հասայ, ուխտ արի: Այլ շէն չի կայ՝ ծով է, հանց ծով է, որ նաւ ալ չի երթալ:

Գ (3) օր կեցայ, ելայ գնացի հարաֆային կողմն, հասայ այն տեղն, որ ծովն սուրբ Յակոբայ մարմինն[ն] դուս էր հանել, որ անգլուխ աստուած կու պաշտէին. քաղաքին անունն Բադրուն կասին: Անկից գնացի, Ե (5) քաղաք ալ անցայ, հասայ Փունթուպետրն, Ադուու: Եւ անկից մեծ գետ մեանցայ¹⁶, մտայ Փոռթուկալաց աշխարհն. հոն ալ լեղու չէի գիտել, շարշարեցայ, մինչև որ յուսայ|| (13)||:

Եւ հասայ Վալէնցայ, Կամէնայ, Բրակայ, Վիլա-նուլայ, Վիանայ, Գ (3) քաղաք ալ անցայ, հասայ մեծ քաղաք մն Փոռթ. ԲՃ(200) եկեղեցի կար, Ճ (100) սրբոց մաս կար, ուխտ արի, ելայ, գնացի մտայ ի ծովն, ելայ Կալայ, գնացի Գ (3) քաղաք ալ անցայ, հասայ Կուումրայ. ի հոն ալ շատ եկեղեցի կար, հասայ Սանթարին, Վիլա Նուլն, Կաստինար, Զաքապին, հասայ մեծ քաղաքն Լիզպոյ՝

Բոռթուկալայ թագաւորին քաղաքն է, գնացի թագաւորին մօտ¹⁷. Խիստ մեծարեց, ողորմութիւն երես: ԳՃ (300) եկեղեցի կայր, Լ (30) վանք կար, շատ սրբոց մաս կար. ուխտ արի, ասին|| (13 բ)|| թէ ՃԴ (100.000) տուն է, Խիստ մեծ քաղաք է. ԵՃ (500) նաւ կու կանկնի առջևն:

1 Ձ. տեսայնք, Սրբ. տեսի, 2. եկեղեցին կայր 2 Ձ. գեցաք, Սրբ. գեցայ և ելայ գնացի հասայ 3 Ձ. եկեղեցին 5 Ձ. եկեղեցին 6 Ձ. Սիմանգաս, կարելի է վերծանել Ուսե Տիմանգաս 7 Ձ. եղեցին 10 Ձ. տեսնուլ փխ տեսնուլ 11 Ձ. ուխտին 21 Ձ. և Ա. գանկակն 24 Ձ. չի քայր փխ. չի կայ 30 Սրբ. մինչև որ յուսայ (2. չի մինչև) 35 Ձ. եկեղեցի մի կար 38 Ձ. եկեղեցին

Մտայ ի նաւն ղնացի առաջի քաղաքն Կոն, Սէթօւրն, Բունդայլիմն-
մայ, Մտայ ի նաւըն, գնացի Այմոնդ, Ե (5) քաղաք ալ անցայ, հասայ մեծ
քաղաք էր՝ Սիւլիլիայ: Գ (3) հարուր եկեղեցի կայ, շատ սրբոց մաս կայ,
մեծ եկեղեցի մն կայ՝ է (7) դուռն ունի, ԾԾ (150) խորան է, շատ սրբոց
5 մաս կայ ի մէջն. ասին, թէ 2Թ (80.000) խանայ է:

Առջև քաղաքին մեծ գետ մն կայ¹⁸, նաւեր շատ կանկնել է թագաւորն
Իսբանեայու, որ նոր Հունտուտան գտաւ: Տարին Ե (5) կամի կու գայ,
ըստակ ու ոսկի կու բերէ: || (14ա) || Այտ այն ոսկին [և] արծաթ [ն] է, որ ինքն
իրեն կու բուսանի, ղարմանք բան է: Շատ ձի, շատ ջորի, կուլ, ոչխար կու
10 մորթին, լաշն կու տանին այն տեղն կու ձգին, որ ոսկին-արծաթն կու
բուսանի. ան տեղն մեծ մոջիմ կու լինի, մեծութիւնն քանձ շան շաք. մոջիմ-
ներն կու ելին ոսկուն միջէն, լաշն ուտել կու երթան Գ—ԴՃ (3—400) ձիա-
ւոր կտրիչ կու երթան, ի մէջն կու մտնուն, վայր ու վեր կու վաղեցրնեն,
ոսկի-արծաթն կու մանտրի *մինչև մոջիմն գայ, մոջիմն լաշն կուտէ ու
15 գառն [այ] գայ իր տեղն, տես [ն] ու մա [ն] տրած է ոսկին ու արծաղն. մոջիմն
բան տեղ կու շէնէ, կու տան [ի] հեռու տեղ [ի] ¹⁹: Կու առնուն ու կու տանի [ն])՝
ի նաւըն կու լնուն ու կու բերին: Նաւին մեծութիւնն ԺԲ (12) տապաղա [է],
ԺԴ (14) տեղ առ [(14բ)] ագաստ կու բանան. եկեղեցի կայ ի մէջն, պա-
հէղ կայ ի մէջն, ջրհոր կայ ի մէջն՝ քար ու կիր պատած, անծրե որ գայ՝ ի
մէջն կու լցուի. խասաֆ կայ, պաղաղ կայ, ԵՃ (500) նաւաւար կայ. 2(6)
20 ամիսն կու գայ կու հասնի Սիւլիլիայ:

Ելաք գնացաք Կարմունայ, Մարշինայ, Սունայ, էսիշայ, Գորտովայ:
Մեծ եկեղեցի մն կայ, ԺԲ (12) դռնէն է, այլ շատ վանքեր կայ, շատ սրբոց
մաս կայ: Ելայ գնացի Հրճիտոն, Անթրեւ, Լոշ, Պելւս, Մալակայ, Ահամայ,
25 Սանթաֆէ, հասայ մեծ քաղաքն Ակրանատ. Մաղրիպացոց թաղթէն է²⁰
հիմայ քրիստ || (15 ա) || ոնեայ է Լղել, շատ եկեղեցի, վանքեր կայ: Մեծ ե-
կեղեցի կայ՝ Ը (8) դուռ ունի, Ծ (100) խորան է, շատ սրբոց մաս կայ.
տեսայ, ելայ գնացի Շալէն, ի հոն է Քրիստոսի անկար պատմութեանն. այլ
շատ մասեր կան: Ուխտ արի, մեղաց թողութիւն խնդրեցի, ելայ գնացի
30 Ալխալայ. այլ Ժ (10) քաղաք ալ [անցայ], հասայ Նոստըր Սինօր²¹ վատա-
լուպ կուսեն, մեծ վանք մի կայ. ԾԾ (150) հաբեղայ կայ, շատ սրբոց մաս
կայ, ըլտաւոր խիստ կու գայ: Ուխտ արի, ելայ գնացի Տալայվեր, Թուլիթ.
մեծ քաղաք է, շատ եկեղեցիք կայ. մեծ եկեղեցի մի կայ՝ Ծ (100) սրբոց
մաս կայ ի մէջն, է (7) դուռն ունի, ուխտ արի, ելայ գնացի Նոստր Սինոր
35 Կարիզայ || (15բ) ||:

Գնացի Մատրիլ, թագաւորին քաղաքն է Ըսպանու *թագօրն հոն չէր.
ԻԱ (21) միլ տեղ մէկ վանք մի կայ, ԾԾ (150) ապեղայ կայ, Ուսկուրեալ
կասեն²² թագօրի ղերեղմանայտուն է, ամառն հոն կերթայ, ձմեռն Մատ-
րիլ կու նստի: Խիստ մեծ վանք է, Ծ (50) խորան է, շատ սրբոց մաս կայ²³:
40 Թագաւորն ի մօտ գնացի, ողորմութիւն առի, թուխթ առի, ելայ գնա-
ցի Ալխալայ, վատաւայշար, Սարայկոս. մեծ քաղաք է, ղօրաւոր եկեղեցի

2 Սրբ. քաղաք ալ անցա (2. չիք տնցայ) 3 2. եկեղեցին, 4 2. եկեղեցին 35, 2. կաս վիլ կայ 7 2. որ գտաւ 14 2. կու մատնրի: 18 2. եկեղեցին 19 2. կայ վիլս
դայ 20 2. նաւարար վիլս նաւաւար 22 Սրբ. ելայ գնացի 23 2. եկեղեցին 24 2. Պելւս,
Սրբ. Պելւս 26 2. եկեղեցին, 2. մեծ եկեղեցին 33 2. շատ եկեղեցիք կայ մեծ եկեղեցին մի
կայ 41 2. եկեղեցին

մն կայ ի մէջն, Աստուածածին է անունն, այլ շատ մասեր կայ: Ուխտ արի, ելայ գնացի լերիգայ, Պարսալուն. ԾՌ (50.000) տոլն է. մահ էր ընկել, ԻնՌ (25.000) դուռն փակվել էր:

Ելայ գնացի Թոռթոն²⁴, այլ Գ (3) քաղաք ալ, հասայ Վալենսայ. մեծ քաղաք է, շատ եկեղեցի կայ, վանքեր կայ, սրբոց մասեր կայ. նաւայհան-գիստ է:

Գնացի, իրիցներուն աղաչեցի. Այլ չիմ կարնալ քալել, մարմնու կալ(16ա)||Երես հատաւ, որ Դ (4) տարի է կու քալիմ. ինձի նաւ մի գտիք: Եկին, գտան նաւ մի, ասին նաւայվարին. Առ զայտ աղփատ հաբեղաւ. տար Հոռմայ աշխարհն: Նաւաւարն ասաց, թէ իմ նաւին մէջն օտար ասլ-րանք չի կայ, նաւըն իմն է, ասլրանքն իմն է, մարդն իմն է. ես անատակ ծովն կու երթամ, այլ ճանփան քաղաք չի կայ, Բ—Գ (2—3) ամիս նաւին մէջն եմ, աստուած գիտէ իմ ազատիլըս. թէ ինքն ալ կարող է, թող մտնու, *ես ալ աստուծոյ սիրովն համալրէ տանի [մ]²⁵. Ես ալ ասի, թէ քանց զքեզ աղէկ չեմ ես, ինչպէս դուն՝ այնպէս ես:

Ես ալ հանց մտայ ի նաւըն, գնացի հասայ կղզի մըն էվիսայ կու ասին, ||(16 բ)|| անկից գնացի Մաճուղգայ, կղզի է, ԼԵ (35) քաղաք կայ, անկից գնացի Մինորգայ, շատ գեղ ու շատ քաղաք կայ:

Անկից ետեւ գնացաք Մեծ ծովին մէջ. ԾՄ (150) նաւաւար էր. ես իմ ընկերներովն Բ (2) ամիս ծովին վերայ կեցայ, շէն չի տեսայ, աստուած պահեց ազատեցայ:

Հասայ մեծ քաղաքն Ճենեւայ, արհնեալ է աստուած շատ եկեղեցի կայ, Ի (20) վանքեր կայ: Ուխտ արի, ելայ գնացի, է (7) քաղաք ալ անցայ, հասայ Բաւիայ, Միլան: Խիստ մեծ քաղաք է, Բ (2) տարւայ ԾՌ (200.000) տուն է, ասին, ԴՃ (400) եկեղեցի կայ, շատ սրբոց մասեր կայ. ուխտ արի, ելայ գնացի, Ի (20) քաղաք ալ անցայ՝ Պլոնիայ, Ֆլորենցայ. Սին, Ակվայ, ||(17 ա)|| Թենթիր, Սան Կիրիկոյ, Մոգանթիֆիաշկ, Վիտերբէ: Եւ այլ Ժ (10) քաղաք անցայ՝ Անապոլի, Պօլիա, հասայ Մոնինու կղզին, Լար, Ֆարֆարին, Ճիլճիլիա, Սարայկոսայ: Այլ Ե (5) քաղաք ալ [անցայ], Ելալ] գնացի բազում քաղաքաւ Կամինա, Ավրօնայ, Աւիցենց, Պատվայ և այլ բազում քաղաքաւ հասա Մատունա-Լոռէդ, որ կու թարքմանի՝ Զօրա-ւոր Աստուածածին, հասա ի քաղաքն Անքունիա: Մտայ ի նաւըն՝ Վենետիք, անկից մտա ի նաւըն Ելա թո||²⁶ [հասայ]|| (17 բ)|| Զոռու, Սիլիվիր, Զաքմայճայ, Ըստամպոլ, Ատրանա:

Ո՛վ ընթերցող բանիս՝ հարք և եղբարք, թէ կասէք մեղաւոր Սարգիսն Ֆոանգըստան կամ ինչ դատար քաղաք է տեսեր՝ Ի (1000) բերթ ու քաղաք տեսեր եմ, թող զգեղրանքն, ԴՌ (4000) հանդիսի եկեղեցի տեսեր եմ, ԳՌ (3000) վանք հաբեղի, ԸՌ (8000) կուսանաց վանք, արհնեալ է աստուած:

Թվ. ՌԼէ (1588) Ըսբանու թագաւորն տօնանմայ շինեց, ԾԼ (130) կամի վարդարեց, ԶՌ (80.000) մարդով Լուդրանին վերայ գնաց, ֆուլթանա եղաւ զամենն²⁷ ||(18 ա)||:

2 Սրբ. Պարսալուն, 2. Պարզալո 9 Սրբ. նաւայվարին, 2. նաւչուն 11 2. չի դայ, 2. մարդն իմնն է 12 2. չի դայ 13 2. իմ փխ եմ 19 2. նաւաւար 29 2. իմ ընկերն էի, Սրբ. իմ ընկերներովն էի 22 2. եկեղեցին 35 2. օվ 37 2. եկեղեցին

Թվ. Ռե(1591) եկի Ըստամուլու, ևլա գնացի Ատրանա, Հայստուստ
Բրաւաուա, Պաղարճուխ, Պաուլա, Հասա Տունա՝ մեծ գետ է²⁸. նաւով ան-
ցա, մտա Պողսուանաց ևրկիրն²⁹, Հասա առաջի քաղաքն Եաշն, Ուումանի,
Սաշուլն, Պոշանն, Սևրաթն, Խութին[ն], մտա գետն³⁰, անցա գնացի Կամե-
նիցն, Հասա Իլախաց աշխարհն: Բաղում քաղաքաւ Հասա Եաշ քաղաքն,
որ է թագաւորանիստ Պուղտան աղգին: Անկից ելա, գնացի Հասա Ագքիր-
ման, որ է Սև ծով, մտա ի նաւըն, գնացի:

Աղաչեմ զքեզ Աստուածածին սուրբ կոյս,

Որ Հանես զիս մթնէ ի լոյս:

- 10 Ա (1) ամիս ծովն կացի, Հասա Հայաստան, արհնեալ է աստուած
Թվ. ՌեԱ (1592) Հասա Հայաստան ի(18 ք)՝:

Թուխթն շատ էր, թանաք [հ]ուլու,

Մեղաւոր Սարդիսն էր մտամուր,

Որ զայս բաներդ շի գրից զամէնն բոլոր,

- 15 Անմեղագիր լերուք ուծուլ:

Ղարիպ եմ ու խիստ լալի,

Այտ օտար աշխարհս որ եկի,

Կու տան ինձ հազար բարի,

Կու սլահեն աչերս ի լալի:

- 20 Ինչ անեմ ես հազար բարին,
Որ կու գա ձայնս զարիսի,
Թողում, իմ աշխարհն երթամ,
Թող կենամ ծարաւ, անօթի³¹:

ՄԱՆՈՔԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ձեռագիրը թերի է. մեկ կամ մի քանի թերթեր չեն պահպանվել: Նիկողայոս Հայրապե-
տի նկարագրվող վանքը գտնվում է Ջմյուռնիա (Իզմիր) քաղաքում: Ուստի Սարդիս արեղան,
Ստամբուլից նավ նստելով, կարճատև կանգաւ է ունեցել Ջմյուռնիայում:

2. Այս և մյուս բոլոր տեղանունների ճիշտ գրությունը և գտնվող տեղը ցույց է տրված նե-
րածական խոսքի մեջ և ներդիր քարտեզի վրա:

3. Նաղարաթ կամ Նաղարեթ էր կոչվում վենետիկից ոչ հեռու՝ Ս. Ղազարի հարավակողմը
(շուրջ 400 մետր հեռավորության վրա, Լիտայի մոտ) գտնվող և այժմ Lazzaretto Vecchio
կոչվող կղզին: Իր անունն ստացել է Նաղարեթի Աստվածամորը նվիրված եկեղեցուց, որ կան-
գուն է եղել մինչև 1249 թ.:

Միջին դարերում այս կղզու վրա, շուրջ 40 օր, արգելափակում էին արևելյան երկրներից
վենետիկ այցելողներին. տարափոխիկ հիվանդությունների, հատկապես ժանտախտի համաճա-
րակից քաղաքն ասպնդվելու համար (տե՛ս «Բաղմավէսը», 1968, թ. 7—12, էջ 406): Սիմեոն
Լեհացին մանրամասն նկարագրում է իր քաջած ծանր օրերը այս Նաղարեթում:

4. Հռոմի պապի հետ տեսակցություն ունենալու և զրուցելու հատվածը բառացի քաղված
է Մ. Նրզնկացուց, ուստի դժվար է պնդել, որ այդ պատիվը արվել է նաև Սարդիս արեղային:
Մեր ճանապարհորդի Հռոմում եղած ժամանակ պապ էր Սիքստոս V-ը (1585—1590), որը բա-
րեկարգեց պապական նահանգի կառավարչությունը, կառուցեց Վատիկանի գրադարանի շենքը
և հիմնադրեց տպարան:

5. Տուտէշ ասելով մեր հեղինակը,— հետևելով Մ. Երզնկացուն,— նկատի ունի գերմանացիներին, որոնք իրենց Deutsch են կոչում: Աղավաղված Տուտէշ ձևն առաջացել է, հավանաբար, իտալական Todesco-ի ազդեցությամբ:

6. Լրտեսության մեղադրանքով Բազել քաղաքում բանտարկվելու հատվածը, ընդմիջարկված լինելով Մ. Երզնկացու «Ուղեգրությունից», չի կարող վերաբերել նաև մեր ճանապարհորդին:

7. Բազելից հետո այցելած քաղաքը Մ. Երզնկացու «Ուղեգրության» ձեռագրում Ֆուսկ-ֆուտթ է կոչված: Այդ, անշուշտ, սխալ է, ստեղծված հետագայում, Եվրոպայի աշխարհագրությունը վատ իմացող ընդօրինակողի կողմից: Ժիշտ է Սարգսի մոտ պահպանված Ֆրուտ-ը, որ Բազելից շուրջ 20 կմ արևելք գտնվող Ferrette (տառադարձված նաև Pfort ձևով) քաղաքն է:

8. Այս քաղաքի անունը գրված է այնպես, որ կարելի է կարդալ նաև Տանզիայ, Գերադասում ենք Սանզիայ վերծանումը, կարծելով, որ մեր ուղեգիրն ի նկատի ունի Սան-Դիզիե (St. Dizier) քաղաքը:

9. Թագավորական գերեզմանատուն հանդիսացող եկեղեցու մեջ վիթխարի ձևան կմխքի գոյություն մասին այս տեղեկությունը գրեթե բառացի քաղված է Մ. Երզնկացու «Ուղեգրությունից»: Այնտեղ, սակայն, այդ ամենը պատմված է Սեն-Դենի քաղաքի նկարագրության մեջ, Սարգիս արքայի այդ քաղաքում չի եղել: Նրա «Ուղեգրության» մեջ Մ. Երզնկացուց ընդարձակ հատվածներ ներմուծած խմբագիրն այս դժվարությունը հաղթահարել է Սեն-Դենի քաղաքի մասին պատմածը վերագրելով Աթուռ (իմա՝ Troyes) քաղաքին:

10. «Ճ տարալայ ճմ տուն» նշանակում է 10 միլիոն տուն: Զարհուրելի չափազանցություն է:

11. Սան Սեբաստիանոս վկայի անունով կոչված Սան-Սեբաստիան քաղաքն է՝ բասկերի երկրի վարչական կենտրոնը:

12. Սպաներեն cruz նշանակում է խաչ:

13. Դմ (4000) թվանշանի առաջին նիշը (Դ) գրված է սրբագրողի կողմից, նախկինում գրված մի այլ թվանշանի վրա: Ուշագիտ դնությամբ հնարավոր է լինում վերծանել նախկին թվանշանը՝ Կմ (60.000), որ անշուշտ չափազանցություն է:

14. Սուրբ Հակոբի վանքում (Santiago de Compostella) Սարգիս արքայից շուրջ երկու տասնամյակ հետո եղել է հույ ունիթոր քահանա Ավգուստինոս Բաջեցին: Ստորև մեջ ենք բերում նրա «Ուղեգրության» այն հատվածը, որ վերաբերում է նշանավոր այդ վանքի նկարագրությանը. «...Հասալ սուրբ Յակոբ, այն աւուրն էր վիճիլ հոգազալստեանն. վաղեան աւուրն տունն կատարեցին. ևս մեղաւորս խոստովանեցայ և հաղորդ առի. այն աւուրն խիստ լաւ դարդարել ին եկեղեցին, գեղեցիկ թափուր արին. և (8) կարտինար հանապաղ հոն կու բնակին. ամենեքեան եպիսկոպոսական զգեստ էին յագեալ և բազում ոսկէ և արծաթէ գաւազան էին վերառեալ և շատ սրբոց մասունք, ամենայն ոսկով պատած, և սուրբ Յակոբոս Ալիկան գլուխն ի թափուրն վեր էին առեալ: Իւր պատկերն ոսկով շինած այ մինչև ի դոտկայտեղն. ի գլխին անգին թագ էին եղեալ, որ գինն լնտուած լաւ գիտէ. Դ. քահանայ յօժարութեամբ (իմա՝ դժարութեամբ—Լ. Խ.) վեր կունին: Եւ սուրբ Յակոբայ գերեզմանն մեծ խորանին տակին այ, դուռն մեծ բեմումն այ. պապէն բանադրանք կայ, որ ոչինչ մարդ չէ կարիլ դուռն բանալ և վեր իջնիլ, տեսնուլ գերեզմանն սրբոյն: Եւ գերեզմանին վերայ ԲԺ. կանթեղ կայ մեծիմեծ և արծաթէ և այլ բազում, հանապաղ վառ են: Ամենայն քրիստոնեայ թագաւորի կանթեղ և տաճար կայ հոն շինած: Եւ սուրբ Յակոբայ գաւազանն ի մէջ եկեղեցումն է և երկաթով պատած է, վասն եկող և գնացողքն չկտրատեն, և մէկ դուռն կայ եկեղեցուն՝ մօտ գերեզմանին, որ կոչեն դուռն ողորմութեան, որ է (7) տարէնն մէկ հետ կու բացի. երանի այնոցիկ, որ այն աւուրն որ բացուի՝ հոն լիցին: Այս սուրբ եկեղեցիս երկու տակ է. որչափ որ վերն է և այնչափ վայրն է. խիստ վարմանալի գեղեցիկ շէնք: Եւ Խ (40) մանկունք հանապաղ երգեն և շարականեն եղանակաւ և բարբառիւ. և խիստ լաւ քաղաք է և էժանութիւն: Եւ այլ բազում գեղեցիկ վանքեր և եկեղեցիք կայ հոն շինած, որ մարդի բերան չի կարիլ պատմել ամենայնս (Նշխարք մատենագրութեան Հայոց, ի լոյս էած Ք. Պատկանեանց), Ս. Պետերբուրգ, 1884, էջ 12—13):

15. Այս վայրում եղել է նաև Մ. Երզնկացին. իր «Ուղեգրության» մեջ նա գրում է. «Ելեալ դիմեցի յԵզր աշխարհի յԵզր Աստուածածինն... որ ֆրանկերէն ասեն Սանթայ Մարիայ Ֆինէստիոնա» (իմա՝ Santa Maria Finisterre): Ավգուստինոս Բաջեցին ասում է, որ «սուրբ Յակոբայ մինչև եղեր Աստուածածին Գ (3) աւուր ճանապարհ է, ասլայ ես գնացի ոչ վասն ընկեր շունելոյն» (Նշխարք մատենագրության Հայոց, էջ 13):

16. Mino (Մինյո) դետն է, որ Սպանիան բաժանում է Պորտուգալիայից, հանդիսանալով վերջինիս հյուսիս-արևմտյան սահմանագիծը:

17. Պորտուգալիայի թագավոր Սերաստիանոսի (1554—1578) վախճանից հետո (սպանվել է Մարոկկոյում)՝ 1580 թ., Սպանիայի թագավոր Փիլիպպոս II-ին հաջողվեց զինական ուժով Պորտուգալիան միակցել Սպանիային, խոստանալով հարգել այդ երկրի ներքին ինքնավարութունը։ Այսպիսով, 60 տարի (մինչև 1640 թ.) Պորտուգալիան Սպանիայի մասն էր կազմում, ուստի շուներ իր թագավորը՝ Սարգիս աբեղան, հավանաբար, թագավոր է կոչում Պորտուգալիայի փոխարքային կամ բարձրաստիճան պաշտոնյաներից մեկին։

18. Գվադալկվիլիի գետն է, որն իր ստորին հոսանքում նավարկելի է։

19. Աստղանիշով եղերված հատվածն ավելացված է սրբազրոդի ձեռագրով՝ էջի ստորին լուսանցքում։ Վերջին տողը զոհ է գնացել կազմարարի դանակին, պահպանվել են միայն տառերի վերին եզրերը։

20. Արաբերեն **نور** — մաղրիպ-արևմուտք բառից։ Այդպես էին կոչվում եգիպտոսից արևմուտք ընկած երկրները՝ Լիբիա, Թունիս, Ալժիր, Մարոկկո, ինչպես նաև Սպանիայի հարավային շրջանները, որոնց մի մասը մինչև 1492 թ. գտնվում էր արաբական տիրապետության ներքո։

21. Սարգիս աբեղան նույնը Սինօր աղճատ ձևով է տառադարձում սպաներեն **Nuestra Senora** (Ֆրանս. **Notre Dame**) արտահայտությունը, որ նշանակում է՝ Մեր տիրուհի, այսինքն Աստվածամայր։ Կաթոլիկ նվրոսայում և, մասնավորապես, Սպանիայում Աստվածամոր անունով բազմաթիվ վանքեր կան, որոնցից են նաև Սարգիս հիշատակած Գվադալուպայի և Կոբիդայի վանքերը։

22. Սպանական թագավորների ամառային աթոռանիստ էսկուրիալ քաղաքն է, որ հայտնի է շքեղ ապարանքով ու վանական մեծ համալիրով։ Իր հիմնական մասով կառուցվել է Սարգիս աբեղայի ճամփորդության շրջանում թագավորող՝ նշանավոր զահակալ Փիլիպպոս II-ի նախաձեռնությամբ ու ծրագրով։

Էսկուրիալում եղել է նաև Ավգուստինոս Բաջեցին. «Այն աուրն հասայ մէկ վանք,— գրում է նա,— որ կոչի էսկուրեալ, որ է խիստ զարմանալի շինած մէջն և ի դուսն. շէնքն ամենայն մառմարիայ. ի մէջ եկեղեցին կայր բարձրում աշտանակ և կանթեղք արծաթեղէն և ոսկեղէն. ԳՃ (300) միարան կայ մէջն սուրբ Զերանիմոսի կարգէն, թող գնացողն, որ հանապազ Գ (3) աուր հաց կուտան և ամենայն պէտսն։ Մէջն զրքատոյն կայ, որ Ծ (50) զազ երկայնութիւն է և ԻՆ (25) զաղ լայնութիւն է, զորով լի, զամենայն ոսկով կազմած և ամենայն ցեղ լեզուէ ի մէջն կայ. և (40) ջորի հանապազ կերակուր կու բերէ և ըմբելի և ամենայն պէտսն։ Ի մօտ վանքին է շինած գեղեցիկ դարպաս թագաւորին, որ թագաւորն ամառն հոն կու բնակէ» (նշխարք մատենագրութեան Հայոց, էջ 12)։

23. Աստղանիշով եղերված հատվածը լրացված է աջակողմյան լուսանցքի վրա, սրբազրոդի ձեռագրով։

24. Այս տեղանվան վերջին և տառը պետք է եղած լինի զ, քանի որ խոսքն, անտարակույս, Tortosa քաղաքի մասին է։

25. Աստղանիշով եղերված հատվածը լրացված է լուսանցքի վրա, սրբազրոդի ձեռագրով։

26. Այս մասից, հավանաբար, թերթ է ընկել։ Բնագրի թերի լինելը նկատել է նաև ձեռագրի պրիշը, որ 5 տողի շափ տեղ անդրել է թողել։ Այս կորուստի պատճառով անորոշ է մնում Սարգիս աբեղայի ճանապարհորդության այս հատվածի ուղեգիրը։ Վենետիկից նավ է նստում, բայց որտեղ է ափ իջնում, չգիտենք։ Շարունակության մեջ հիշատակված առաջին աշխարհագրական անունը Զոուլուն է, որ գտնվում է Թեբրդաղից շուրջ 60 կմ հյուսիս-արևելք, ծովից հեռու։ Պետք է ենթադրել ուստի, որ մեր ուղեգիրը ճանապարհի այս հատվածի գեթ մի մասը կտրել է հետիոտն, ծանոթանալով Թուրքիայի եվրոսկական մասի որոշ շրջանների հետ։

27. Այս ուշագրավ գրանցում է Սպանական ծովուծի «Անպարտելի արմաղա» կոչվող նավատորմի Անգլիա կատարած անհաջող արշավանքի, փոթորկի տակ ընկնելու և կործանման մասին։ Սարգիս աբեղան Սպանիայում թափառել է ողբերգական այդ դեպքից (1588 թ.) շուրջ 2 տարի հետո։ Նավերի թիվը (130) ճիշտ է տրված, իսկ անձնակազմինը (80 հազար)՝ չափազանցված է։ Ըստ ստույգ տվյալների «Անպարտելի արմաղային» սպասարկում էին 8 հազար նավաստի և 19 հազար զինվոր։

28. Դունայ կամ Դանուբ գետն է։

29. Միջնադարյան հայ հեղինակները այսպես (Պուղտանայ կամ Պողտանաց երկիր) էին անվանում Մոլդովան։

30. Դեհստր գետն է, որի աջափնյա տարածություններն այս ժամանակաշրջանում պատկանում էին Մուղղվային (Պուղտանաց երկիր), իսկ ձախափնյա շրջանները՝ Լեհաստանին (Սարգիս արևդան, ուրիշ շատ հայ հեղինակների նման, Լեհաստանը Իլախաց աշխարհ է կոչում)։

31. Այս գողտրիկ հայրենը, որ իր հոգեկան վիճակին համապատասխան ընտրել է իր գիտցած գոսանական-ժողովրդական երգերի միջից ու դրանցից մեր ուղեգիրը՝ անձանոթ է։ Մ. Աբեղյանին հայտնի է գրեթե նույն («հարիպ եմ ու խիստ լալի»։ Յայս օտար երկիրս որ եկի») սկզբով մի հայրեն, որի մյուս տողերը միանգամայն տարբեր են (տե՛ս Գոսանական-ժողովրդական տաղեր. Երևան, 1940, էջ 199)։

ПУТЕВЫЕ ЗАПИСИ ИНОКА САРГИСА

Член-корр. АН Арм. ССР Л. С. ХАЧИКЯН

(Р е з ю м е)

В 1587—1592 гг. по европейским странам путешествовал некий инок по имени Саргис, который, возможно, был членом братии монастыря св. Կиракоса близ города Ерзынка (из этого же монастыря за сто лет до него вышел другой известный армянский путешественник Мартирос Ерзынкаци). В начале своего длительного путешествия Саргис сперва посетил Константинополь и Смирну (Измир), затем морем отправился в Венецию, побывал в Риме и других городах Италии. Он дошел пешком до Швейцарии, посетил ряд городов на берегах Рейна. В последующем побывал во Фландрии, Англии, Франции, Португалии и Испании. Вернулся в Константинополь в 1591 г. через Италию, посетив по дороге Сицилию и Сардинию.

В том же году им было предпринято новое путешествие по маршруту: Адриано-поль, через Молдавию и Польшу — Аккерман, оттуда—морем—к себе на родину, про-быв в странствиях около шести лет.

Путевые записи инокa Саргиса (в частности, раздел, посвященный Испании и Португалии) представляют значительный интерес. Они обогащают известные средневековому армянскому обществу сведения о Европе новыми и ценными данными. Излагая свои путевые впечатления, Саргис в первую очередь обращает внимание на монастыри и церкви, мимоходом сообщая также сведения о численности населения городов, иногда — об их занятиях, состоянии торговли, о благотворительных и культурных учреждениях и т. п.

Единственный список путевых записей Саргиса сохранился в рукописи Матенадарапа № 9832, публикуемой впервые.